NN 1-2 (6-7) ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ 2005թ.

www.dzaynhamshenakan.org

ՀԱՅՆ ՀԱՄՇԵՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար

ԴԺՎԱՐԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

«Հայն համշենականի» հարցերին է պատասխանում Աբխազիայի կրթության նախարարության առաջատար մասնագետ, «Աբխազիայի հանրապետության հայկական համայնք» ՀԿ խորհրդի անդամ, «Համշեն» թերթի խմբագիր, բանաստեղծ Արտավազդ Սարեցյանը:

- Խնդրում եմ պատմեք Ձեր մասին:

- Ծնվել եմ 1957-ին՝ Սուխումում, ավարտել եմ Սուխումի Հովի. Թումանյանի անվան դպրոցը, 1975-77թթ. ծառայել եմ բանակում, 1978-83թթ. սովորել եմ Աբխազական պետական համալսարանի պատմության բաժնում, ավարտելուց հետո պատմության ուսուցիչ եմ աշխատել իմ հարազատ դպրոցում, 1988-92թթ. եղել եմ Սուխումի շրջանի Լեչկոպ գյուղի հայկական միջնակարգ դպրոցի տնօրենը, պատերազմից հետո՝ 1994-ից մինչև օրս գլխավոր մասնագետ եմ Աբխազիայի կրթության նախարարությունում, պատասխանատու եմ նաև հայկական դպրոցների և Հայաստանի ու Աբխազիայի կրթության նախարարությունների միջև կապի համար:

- Ե՞րբ հիմնադրվեց «Համշեն» թերթը:

- «Համշեն» թերթի առաջին համարը տպագրվեց 1991թ. հոկտեմբերին, նրա ծնունդը առաջինը շնորհավորեց հենց Ձեր «Լույս Համշենի» թերթը:

- Շնորհակալություն, որ հիշեցիք, այո՛, «Լույս Համշենի» թերթի երկրորդ համարում ես խմբագրության անունից շնորհավորեցի «Համշեն» թերթի հինգ հազար տպաքանակի լույս ընծայման ու Երևանից Աբխազիա առաքելու առիթով: Հետագայում պահպանվե՞ց այդ մեծ տպաքանակը:

- Մինչև պատերազմի սկիզբը՝ 1992թ. օգոստոսը, այդ տպաքանակով լույս տեսավ երեք համար, չորրորդը հրատարակվեց սեպտեմբերին: Սուխումի տպարանը հայերեն տառեր չուներ, ուստի թերթը տպագրում էի Երևանում: Թերթի հրատարակությունը վերսկսեցի 1998-ին, այն ժամանակ դեռ համակարգիչ չունեինք, որպեսզի հայերեն տառեր մուտքագրեինք, ուստի մի քանի համար տպագրեցի ռուսերեն, իսկ համակարգիչ ձեռք բերելուց հետո՝ 1999-ից հայերեն և ռուսերեն:

- Ռուսերենը գերիշխում է, ի՞նչն է պատճառը:

- Պատճառը հայերեն նյութի պակասն է, մենակ եմ աշխատում, թղթակիցներ չունեմ, որ մեկնեն շրջաններ, գյուղեր: Իսկ կրթության նախարարությունում իմ ծանրաբեռնվածությունը թույլ չի տալիս ամբողջովին նվիրվել խմբագրական աշխատանքին:

- Ի՞նչ արժի թերթը, այժմ որքա՞ն է տպաքանակը, ինչպե՞ս է վաճառվում:

- Թերթի մեկ օրինակը արժի 6 ռուսական ռուբլի, տպաքանակը 1500 է, 200 հատ անվճար տալիս եմ Սուխումի «Ծովաշունչ» երգի-պարի համույթին, որպես օգնություն, վաճառում են և գումարը օգտագործում իրենց կարիքների համար: Թերթը, բնականաբար, տարածվում է հայկական գյուղերում: Մինչև այժմ տպագրվել է 63 համար: Թերթը սկզբում գրական-լուսավորական էր, քաղաքական հարցերի չէր անդրադառնում, 2004թ. ապրիլին ստեղծվեց «Աբխազիայի հանրապետության հայկական համայնք» հասարակական կազմակերպությունը (Աբխազիայի արդարադատության նախարարությունում գրանցվեց օգոստոսի 4-ին) և թերթը դարձավ «Աբխազիայի հանրապետության հայկական հասարակական պարբերաթերթ»: Թերթը նույնպես գրանցվել է Աբխազիայի արդարադատության նախարարությունում, հրատարակիչներն են «Աբխազիայի հանրապետության հայկական համայնքը» և թերթի խմբագրությունը:

- Իսկ որտե՞ղ է տպագրվում թերթը հիմա:

- Արդեն երկու տարուց ավելի է հրատարակվում է Սոչիում:

- Ինչու՞, համակարգչի շնորհիվ հայերեն տառերի հարցը, կարծում եմ, այլևս չպիտի ծագի:

- Սոչիում է տպագրվում, որովհետև Սուխումում թանկ է: Բայց ի՞նչ արած, ստիպված ենք: Անկեղծ ասած, ռուս-աբխազական սահմանը անցնելը շատ դժվար է, ամռանը հազարավոր հանգստացողների հերթեր են գոյանում, պետք է ժամերով սպասես անցակետերում, ձմռանն էլ մանդարինի արտահանման համար են հերթեր գոյանում: Երբեմն ես չեմ կարողանում գնալ Սոչի, սահմանային այդ քաշքշուկներին համբերությունս չի բավականացնում, հերթեր կանգնել ինձ համար շատ դժվար է և հաճախ կինս է իմ փոխարեն գնում Սոչի՝ տպարան: Կինս՝ Գոհար Թեփուլյանը, ուսուցչուհի և կազմակերպիչ է աշխատում Հովի. Թումանյանի անվան դպրոցում: Պետք է ասեմ, որ երեխաներս նույնպես օգնում են, աղջիկս՝ Սուսանը, ռուսերեն շարվածքն է անում, տղաս՝ Հայկը, հայերենը:

- Արտավազդ, չնայած դժվարություններին, Դուք վերջերս ավելի եք ծանրաբեռնել Ձեզ՝ հիմնելով «Համշեն» թերթի մատենաշար: Ի՞նչ գրքեր եք հրատարակել:

- Մատենաշարը ստեղծել ենք 2000 թվականին. տպագրել ենք Հովի. Թորոսյանի «Կանչ», Ժորա Էրուքյանի «Աշուն» և «Թռչնի երգը», իմ «... Որ մաքուր մնամ ...» և «Ափացխա» բանաստեղծությունների ժողովածուները, Հարություն Եթումյանի Համշենի բարբառով գրած չափածո գրքերը («Խաղեր», «Կոլխոզին պեչատը»): Նշանավոր գրող Բագրատ Շինկուբայի առաջաբանով հրատարակել ենք «Աբխազական առածանի» գրքույկը, որը կազմել է պրոֆեսոր Օլեգ Շամբան (թարգմանիչը ես եմ): Տպագրել ենք նաև սուխումցի դերասանուհի Լարիսա Վելիևայի ռուսերեն բանաստեղծությունների «Сны в сумерках» գիրքը:

- Այս գրքերը և՞ս Սոչիում են լույս տեսել:

- Ո՛չ, մեծագույն մասը հրատարակվել է Սուխումում:

- Շնորհակալություն հարցազրույցի համար և հուսով եմ, որ այսուհետև «Համշեն» և «Հայն համշենական» թերթերը լավ բարեկամներ կլինեն:

Զրույցը վարեց ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Արագիչ, գյուղ Աբխազական ԻՍՍՀ Օչամչիրայի շրջանում, շրջկենտրոնից 35 կմ հյուսիս-արևմուտք: 1500 բն (1968թ.), հայեր: Կոլտնտեսությունը զբաղվում է ծխախոտի, թեյի, եգիպտացորենի մշակությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Ունի միջնակարգ ու տարրական դպրոցներ, ակումբ, գրադարան, բուժկայան, կինո: Գյուղը հիմնադրել են Օրդուից գաղթած հայերը 1898-ին:

Հայկական Սովետական Հանրագիտարան, հ.1, Երևան, 1974թ., էջ 682:

- Ասա՛, հորեղբայր Եղիա, մենք որտեղի՞ց ենք եկել, ո՞ր թվականին, չէ՞ որ մենք հայ ենք, իսկ երկիրը կոչվում է Աբխազիա:

Այս հարցը ես տվել եմ մանուկ հասակում: Ահա թե ինչ պատմեց.

ԱՐՇԱՎԻՐ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐԱԿԻՉ

Արշավիր Գալուստի Մինասյանը ծնվել է 1923թ. Արակիչում, ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, մասնակցել է Հայրենական պատերազմին, որից հետո սովորել է Մոսկվայի Կրուպսկայայի անվան նկարչական դպրոցի հեռակա բաժնում:

Աշխատել է Արակիչի դպրոցում որպես նկարչության ուսուցիչ: Ներկայումս թոշակառու է, բնակվում է Արակիչում:

- Մեր նախնիները Անի քաղաքի մոտիկ գյուղերից են: Այնտեղ թուրքերը շատ էին հալածում հայերին, ծեծ, բռնաբարություն, սպանություն... Մի քանի ընտանիք գիշերը փախչում, գալիս են ու բնակվում Օրդուի մոտ: Այստեղ էլ 1867թ. ծնվում է իմ հայր Պողոսը: Որոշ ժամանակ ապրում են հողագործությամբ, բայց թուրքական հալածանքների պատճառով 1874-75թթ. նավակներով տեղափոխվում են Ռուսաստան:

Դպրոցի նոր շենքը

Պետք է նշել, որ այդ թվականներին շատ հայեր արտագաղթեցին Ռուսաստան և Աբխազիա: Իջնելով Սոչիի նավահանգստում, մերոնք գնում են Լոոյի մոտիկ Գորոբ-Դեղ կոչվող գյուղը: Կառուցում են փայտյա տներ, իրար օգնելով սկսում են իրենց ավանդական ծխախոտագործությունը:

Այս գյուղում բնակվում են մինչև 1903թ.: Լսում են, որ Աբխազիայում լավ հողեր կան, որտեղ ծխախոտը լավ է աճում: Նույն ժամանակներում, Աբխազիայի իշխան Շերվաշիձե–Չաչբան հրավիրում է, որ ժողովուրդը գա Աբխազիա ու զբաղվի ծխախոտագործությամբ:

Նորից գաղթ: Նույն ընտանիքները իրենց ունեցվածքը բարձում են սայլերը և ճանապարհ ընկնում դեպի Աբխազիա:

Գալիս են Օչամչիրայի շրջանի Կոդորի ույեզդը, որտեղ էլ նրանց դիմավորում է իշխանի ներկայացուցիչը՝ Լադարյա Կետխոն, ու մերոնց տանում է այնտեղ, որտեղ գտնվում է ներկայիս Արակիչ գյուղը: (Հարևան գյուղերն են, արևմուտքում Աձուբժան, հյուսիսում՝ Աթարան, մի քիչ վերև՝ Հայկական Աթարան, արևելքում՝ Կինդղն է, հարավում՝ Ծուրգիլը և Սկուրչան):

Այդտեղ ապրում էր երեք ընտանիք՝ Քեշիշյան Սահակի, Զատիկյանի, որոնք բնակություն էին հաստատել 1898թ.: Ապրում էր նաև մի ռուս կոզակ՝ Խարչենկո Աֆանասի, որը Կուբանից էր, ինչ պատճառներով էր եկել՝ չգիտեմ:

Գյուղը անուն չուներ, ասում էին Ծուրգիլ: Գյուղում կար մի մեծ ծուռ ընկուզենի, աբխազերեն նշանակում է Արակիչի, այս անունով էլ մնաց մեր գյուղի անունը Արակիչ:

Նորեկները այս երեք ընտանիքների մոտ էլ սկսեցին կառուցել իրենց տները:

Պետք է նշել, որ իշխանը հողերը ձրի տալուց հետո թույլատրեց անվճար օգտագործել նաև շրջակա կաղնու ծառերը:

Իրար օգնելով, Արակիչի չորացող գետի երկարությամբ կառուցեցին փայտյա երկհարկանի տներ, առաջին հարկում գոմն էր, իսկ երկրորդ հարկում, որտեղ օջախն էր (մենք ասում էինք՝ պուրագ), ապրում էին բնակիչները:

Ժողովուրդը լծկան եզներ ուներ և արոր, սկսեցին վար անել: Նաև տնկեցին տարբեր մրգատու ծառեր, զբաղվեցին ծխախոտագործությամբ, ցանեցին եգիպտացորեն: Աբխազների հետ համերաշխ էին ապրում:

Բայց հեռու տեղերից աբխազները գալիս գողանում էին եզները, կովերը: Իշխանի ցուցումով, հարևան աբխազներից կազմեցին մի խումբ, որը վռնդեց թալանչիներին, որոնք այլևս չերևացին գյուղում, գյուղացիք շատ շնորհակալ եղան իշխանից: Իշխանը խորհուրդ տվեց, որ ամեն մի հայ ընտանիք սերտ կապեր հաստատի աբխազների հետ:

Եվ այդպես էլ արեցին, օրինակ՝ Մինասյան Պողոսը բարեկամ դարձավ Կվիցինիա Կարպուզի հետ, իսկ Խաչիկը՝ Չանբացիների հետ, Թոփչյան Գևորգը՝ Կվիցինիա Բիդաջի հետ, Ուստյան Հայկազը՝ Կվիցինիա Թևազի հետ, Չաքրյան Հովհաննեսը՝ Ադլեյբացիների հետ, Կրբաշյանները՝ Կվիցինիա Միխայի հետ, Զեյթունյանները՝ Կոգոնիաների հետ և այլն: Այս ընտանիքներն այնքան մտերմացան, որ անգամ կնքում էին երեխաներին, ներկա լինում և՛ ուրախության, և՛ տխրության ժամանակ:

Այս ավանդույթը շատ երկար տևեց. հայերը սովորեցին աբխազերեն, աբխազները՝ հայերեն: Օրինակ՝ Մինասյան Եղիան, Թոփչյան Համբարձումը, Զեյթունյան Խորենը, Աթմաջյան Գարեգինը, Մարգարյան Հայիկը գիտեին աբխազերեն, իսկ Կվիցինիա Ջոդոն, Թանդիլը, Անդրուշան, Գուջը և Աշխարուա Բաջգոն՝ հայերեն:

→

ՏՈՀՄԱԾԱՌ

Արակիչ գյուղում խմելու ջուր չկար, խմում էին գետի ջրից, կամ փոս էին փորում, ջուր էին հավաքում ու օգտագործում էին, բայց ջուրը շատ ժամանակ որդերով էր լցվում, ստիպված քամում էին ծարերով:

Շատերը ուզում էին գնալ ուրիշ տեղ, իշխանի տեղակալ Կետխոն հայտնում է

Դպրոցի հին շենքը:

Մի խումբ արակիչցիներ:

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը:

իշխանին գյուղի դրության մասին, այդ ժամանակ գյուղում կար մոտավորապես 40-50 տուն:

Իշխանը իր հաշվին փորել է տալիս երեք ջրհոր: Դուրս է գալիս խմելու մաքուր ջուր: Այդ ջրհորները, իհարկե, հետագայում շատացան և օգտագործվեցին մինչև 1973թ. մայիսի 1-ը, երբ ամբողջ գյուղը ապահովվեց ընդերքի ջրով:

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Այը առանց դպրոցի՞: Արդեն կար տասից ավելի աշակերտ: Միացյալ ուժերով կառուցեցին երկու սենյականոց դպրոց, ու հրավիրեցին Մինասյան Հայրապետին, որպեսզի դասավանդի աշակերտներին (Հայրապետը կրթված ընտանիքից էր, դեռ Գորոբ-Դեղում էլ վարժապետ էր):

Նա սիրով ընդունեց հրավերը: Առաջին աշակերտներն էին Մինասյան Եղիան, Թոփչյան Խաչիկը, Ուստյան Հայկազը, Ձեյթունյան Գալուստը, Չաքրյան Հարությունը, Արշակը, Ասատուրը և ուրիշներ:

Նա աշխատեց երկար տարիներ, մինչև 1923-24թթ., երբ նոր ուսուցիչ եկավ Հայաստանից՝ Վաչագան Նիկողոսյանը: Նիկողոսյանի օրոք կառուցվեց հինգ սենյականոց դպրոց, որտեղ կարող էին սովորել հիսունից ավելի աշակերտներ: Նրա հրավերով Հայաստանից եկան նոր ուսուցիչներ՝ Ալեքսանյան Շուշանիկը, Դորի Ամիրբեկյանը, Հակոբը, Շավարշը (ցավոք նրանց ազգանունները չեմ հիշում): Նիկողոսյանը բավականին աշխատելուց հետո մեկնեց Մոսկվա՝ սովորելու: Ավարտելուց հետո աշխատեց Սուխումում՝ Լակոբայի հետ: 1936-37թթ. որպես «ժողովրդի թշնամի» գնդակահարվեց:

Դորի Ամիրբեկյանը նույնպես մեկնում է սովորելու և հետագայում դառնում է Հայաստանի և Վրաստանի ժողովրդական արտիստ: Պատերազմից հետո՝ 1950թ., իրենց թատերական խմբով եկավ Արակիչ և «Օթելլո» ողբերգությունում խաղաց Յագոյի դերը:

1930թ. դպրոցի տնօրեն նշանակվեց Մինասյան Կարապետը: Նրա հրավերով Սուխումից դպրոցում աշխատելու եկան Մաղաքյան Գրիշան և Գասպարյան Օնիկը: Որոշ ժամանակ աշխատելուց հետո նրանք էլ գնացին սովորելու, Մաղաքյանը դարձավ բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, և մինչև կյանքի վերջը աշխատեց Սուխումի կապիկանոցում, որպես գլխավոր բժիշկ:

Քանի գնում աշակերտների քանակը ավելանում էր, արդեն երկու հարյուրից ավելի աշակերտ կար: 1933թ. Հայաստանից հրավիրվեցին մի խումբ ուսուցիչներ՝ Հովհաննիսյան Հրաչը, Հակոբը, Հարությունյան Մակաբեն, Ժորան, Սահակյան Խաչիկը, Այվազյան Կոլյան, Բոյաջյան Արշալույսը, Թբիլիսիից՝ Յասամանյան Դարյան և Սարգսյան Երանուհին, Սուխումից՝ Դադյան Գուրգենը: Դպրոցն արդեն տարրական չէր, այլ՝ ոչ լրիվ միջնակարգ:

1935թ. դպրոցի տնօրեն Մինասյան Կարապետը գնաց ուսումը շարունակելու: Տնօրեն նշանակվեց Հովհաննիսյան Հրաչը, իսկ ուսմասվար՝ Դադյան Գուրգենը,

Հրաչ Հովհաննիսյանը հայոց լեզվի դասաժամին:

որոնք ձեռք-ձեռքի տված բարեխղճորեն աշխատեցին մինչև 1940թ.: Մինասյան Կարապետը, ավարտելով ինստիտուտը, նորից նշանակվեց տնօրեն: Աշակերտների թիվն արդեն հասնում էր երեք հարյուրի: Կոլտնտեսությունը կառուցեց չորս սենյականոց ևս մի դպրոց: Այն աշակերտները, որոնք գնացին սովորելու, ավարտելուց հետո եկան աշխատելու. նրանք էին՝ Մինասյան Արշալույսը, Յուղաբերը, Դանիելը, Թոփչյան Երջանիկը, Օհանյան Զարուհին, Ուստյան Գրիգորը, Բաղդասարյան Մարտիկը, Չաքրյան Սիրանուշը: 1940թ. դպրոցը դարձավ լրիվ միջնակարգ:

Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, շատ համագյուղացիների հետ ռազմաճակատ մեկնեցին և ուսուցիչները, որոնց շարքերում էր դպրոցի տնօրենը: Շատերը զոհվեցին, նրանց հետ նաև դպրոցի տնօրենը:

Այն ուսուցիչները, ովքեր հետ եկան, սկսեցին աշխատել դպրոցում, որի տնօրեն նշանակվեց ռազմաճակատից վերադարձած Հրաչ Հովհաննիսյանը, իսկ ուսմասվար՝ Դադյան Գուրգենը:

Աշակերտների մի մասն էլ ինստիտուտն ավարտելուց հետո վերադարձավ աշխատելու դպրոցում, նրանք էին՝ Ուստյան Շավարշը, Մինասյան Շալիկոն, Գաբրիելյան Սուրենը, Քերսելյան Արշալույսը,

Տնօրեն Հրաչ Հովհաննիսյանն աշակերտների հետ:

Մինասյան Արշավիրը, Չաքրյան Էլեոնորան, Օհանյան Օհաննեսը և ուրիշներ:

Աշակերտների քանակը հասավ մինչև վեց հարյուրի, դպրոցի դասարանները չէին բավարարում: Կոլտնտեսության վարչությունը՝ Օհանյան Երվանդի ղեկավարությամբ որոշեց տուֆ քարից կառուցել երկհարկանի դպրոց՝ բոլոր հարմարություններով, մարզադահլիճով: 43 տարի աշխատելուց հետո, տնօրեն ընկեր Հրաչը, ծերության հասակում, արժանի դարձավ թաղվելու Մայր Հայաստանի հողում, թողնելով Արակիչում բարի հիշատակ:

Երբ սկսվեց վրաց-աբխազական պատերազմը դպրոցը դարձրին զորանոց: Շատ ընտանիքներ ստիպված էին տեղափոխվել Ռուսաստան և այլևս չվերադարձան, փակվեց և դպրոցը:

Պատերազմը վերջացավ, դպրոցը սկսեց աշխատել, չկային կադրեր, գրքեր, բայց տնօրեն Կանսուզյան Գեղանուշը կարողացավ դպրոցը վերականգնել՝ հավաքելով նոր կադրեր: Հետ վերադարձավ նաև Նազարյան Գրետան:

Նախքան վրաց-աբխազական պատերազմը Արակիչում բնակվում էր երկու հազար հինգ հարյուր մարդ, աշակերտների թիվը վեց հարյուրից ավելի էր:

Ներկայումս Արակիչում բնակվում է վեց հարյուր երեսունհինգ մարդ, իսկ աշակերտների թիվը ութսունհինգ է:

ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Արակիչում չկար եկեղեցի: Գորոբ-Դեղից եկած Մինասյան Խաչիկի ընտանիքը կրթված էր, նրա մեծ որդին՝ Հայրապետը, Արակիչի առաջին ուսուցիչը, դեռ Գորոբ-Դեղում ուսուցիչ էր:

Խաչիկը իր մյուս որդուն՝ Գևորգին ուղարկում է էջմիածին ուսանելու: Նա 1912թ. օծվում է քահանա՝ Տեր Գևորգ անվամբ: Հետ է գալիս Արակիչ ու կառուցում փայտյա եկեղեցի՝ երկու հարյուր հոգի տեղավորող: Հայաստանից բերեց զանգ, կախեց եկեղեցու մոտիկ, երկու ծառերի արանքում, փորել տվեց ջրհոր (35 մետր), եկեղեցու բակում տնկեց պտղատու ծառեր: Զանգը հնչում էր թե՛ կնունքի ժամանակ, թե՛ ուրախության, անգամ դժբախտության (ժամհարը Ուստյան Հայկազն էր):

Պիոներական տողան դպրոցի բակում:

Ամեն շաբաթ և կիրակի հավաքվում էին եկեղեցու բակում՝ և՛ պարում էին, և՛ երգում: Զուռնաչին Քոչկոնյան Թաթիկն էր, դհոլչին՝ Թիլքիջյան Դավիթը, քյամանչան նվագում էր Էքսուզյան Սողոմոնը: Դա տևեց մինչև 1929թ., երբ կոմսոմոլները մտան եկեղեցի, ջարդեցին գույքը, գրքերը լցրեցին ջրհորը: Տեր Գևորգը լաց էր լինում, աղաչում, մազերն էր պոկում, բայց ապարդյուն: Երգում էին՝ «տերտեր մորուքդ խուզիր, մեզնից թողություն ուզիր»:

Քահանան մորուքը չխուզեց, չարագործները իրենց չար գործն արեցին, ամոթ նրանց չար գործին:

Հայրենական պատերազմում նրա չորս որդիները մարտնչում էին թշնամու դեմ, իսկ քահանան սոված, մոռացության մեջ մահացավ 1945 թվականին:

Այն եկեղեցին, որը հետագայում գյուղի ակումբն էր, վրաց-աբխազական պատերազմից հետո մի գիշեր վառեցին անհայտ մարդիկ:

ՋՐԱՂԱՑԻ ՄԱՍԻՆ

Արակիչ գյուղում չկար ջրաղաց, մարդիկ եգիպտացորենը աղում էին ձեռքով (էրգոնք քար), կամ տանում էին այնտեղ, որտեղ ջրաղաց կար:

Ամերիկայից գալիս է Ջատիկյան Ավետիսը ու պսակվում է Քեշիշյան Սահակի աղջկա հետ: Նա, տեսնելով, որ ջրաղաց չկա, ուսումնասիրում է տեղի գետը, գտնում է մի հարմար տեղ, որտեղից ջուրը

Արակիչցիներ

կարելի է թափով հոսեցնել ներքև:

Կառուցում են շենքը, փորում են առու և ջուրը փայտյա խողովակով հոսեցնում անիվի վրա և պտտեցնում քարերը:

Այս կատարվեց 1910 թվականին: Ժողովուրդը շատ գոհ մնաց այս երիտասարդից: Ժողովուրդը բաժանեցին օրերը տների վրա, ով որ օրը պիտի աղար ալյուրը:

Պետք է նշել, որ հիմնականում ալյուրը

Քիմիայի ուսուցիչ Գրիգոր Ուստյանն աշակերտների հետ:

Ուսուցիչներ Խ. Ուստյանը և Ա. Քերսելյանը սաների հետ:

Ձախից նստած են ուսուցիչներ Ա. Եղիազարյանը, Մ. Յոլյանը, Ս. Քիվիրյանը, Կ. Այվազյանը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Քերսելյանը, Մ. Էլեքչյանը:

աղացվում էր ձմռանը, որովհետև գարնանը այս առվակը չորանում էր: Այս ջրաղացը աշխատեց մինչև 1934 թվականը:

1934թ. գյուղի ղեկավարներ Ուստյան Կարապետը և Մինասյան Գալուստը որտեղից որտեղ ճարեցին մի դիզել: Սուխումից հրավիրեցին Դենիս անունով մի ռուս ինժեներ, որը գյուղի կենտրոնում շինել տվեց շենքը և սարքավորեց էլեկտրաղացը: Նա վերցրեց մի աշակերտ՝ Օհանյան Եփրեմին, որին սովորեցրեց, որից հետո գործը հանձնեց նրան ու ինքը գնաց Կուբան:

Այդ դիզելի վրա շատ մեխանիկներ աշխատեցին մինչև պատերազմը և հետո: 1952թ. մեխանիկ Զեյթունյան Զարենը էլեկտրական լույս տվեց վարչության շենքին: Դիզելը դադարեց աշխատել 1958թ., երբ գյուղը ամբողջապես էլեկտրաֆիկացվեց:

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արակիչում կոլտնտեսությունը կազմակերպվել է 1929 թվականին: Առաջին նախագահը եղել է Զեյթունյան Գալուստը: Կոլտնտեսության առաջին անդամները չքավորներն էին, ո՛չ լծկան ունեին, ո՛չ էլ գութան: Ովքեր չէին ուզում մտնել կոլտնտեսություն, այնպիսի օյինբազություններ արեցին կոմսոմոլները (գողանում էին լծկան եզները, գութանները, թալանում տները), ստիպված «կամավոր» դիմում տալով մտան կոլտնտեսություն:

Կոլտնտեսության նախագահը չկարողացավ աշխատել, ընդհանուր ժողովով ազատեցին նրան ու տեղը ընտրեցին Ուստյան Կարապետին, իսկ գյուղխորհրդի նախագահ նշանակեցին Մինասյան Գալուստին (պետք է հիշատակել, որ Արակիչ գյուղը Աթարայի գյուղխորհրդի մեջ էր մտնում):

Այս երկու ղեկավարները ձեռք-ձեռքի տալով աշխատեցին:

Կոլտնտեսությունը հիմնականում զբաղվում էր ծխախոտագործությամբ: Մշակվում էր նաև եգիպտացորեն: Կոլտնտեսությունը բաժանված էր հինգ բրիգադի, ով որ բացակայում էր, բրիգադավարը գրում էր բացակա, կես օր աշխատողին տալիս էին դեղին գույնի թուղթ, իսկ լրիվ աշխատողին՝ կարմիր թուղթ, տարվա վերջում դրանց հիման վրա տրվում էր աշխատավարձը:

Ծանր աշխատանքները՝ վար անելը, ծխախոտ բերելը, կատարում էին լծկան եզներով, սայլերով: Ուղարկեցին մի քանի հոգի Ռուսաստան, ձիեր բերեցին, աշխատանքը ավելի թեթևացավ, իսկ 1935 թվականին գնեցին մի ավտոմեքենա «գազիկ», որի վարորդն էր Ուստյան Հայկազը:

Հետագայում քանի գնաց, կոլտնտեսությունը հարստացավ, գնեցին երեք հատ տրակտոր «ֆառզոն», առաջին տրակտորիստներն էին Էքսուզյան Սողոմոնը, Բույուքլյան Անդրանիկը և Գաբրիելյան Նիկոլայը: Ամբողջ վարն ու ցանքը տրակտորով էին անում:

Կոլտնտեսության անունը «Կրասնի Արակիչ» էր և գյուղի համբավը տարածվեց ոչ միայն Աբխազիայում, այլև ամեն տեղ, շատերը ընտանիքներով եկան ու բնակություն հաստատեցին:

Պետք է նշել, որ գյուղում ճանապարհ չկար, սարքեցին, հարթեցին, իսկ Արակիչ-Դաչա ճանապարհը ուղղեցին, լայնացրին հինգ-վեց մետրով: Քարերը սայլերով բերում էին ծովափից, գետերից, որտեղից որ գտնում էին: Քարերը ջարդում էին ու լցնում ճանապարհի վրա, որը չորս կիլոմետր երկարություն ուներ: Դա այն ճանապարհն էր, որը գոյություն ունի ներկայումս. հիմա, իհարկե, ասֆալտապատված է:

1936-37թթ. սկսվեց, այսպես կոչված, տրոցկիստների, ժողովրդի թշնամիների մերկացումը, որի ժամանակ տուժեց և Արակիչը:

Ահա թե ինչ եղավ ակումբի մոտ. Ուստյան Ռուբենը թերթ էր կարդում, հանկարծ ասաց. «Եթե այս բոլորը ժողովրդի թշնամի են, ապա Ստալինն էլ գլխարկը առնի ու գնա», երրորդ օրը բանտարկեցին, մի քանի օրից հետո բանտարկեցին նրա եղբորը՝ կոլտնտեսության նախագահ Ուստյան Կարապետին, շատ չանցած Դաչայից՝ Կալաջյան Սահակին և Փաշյան Առաքելին: Ահա թե ինչպես բանտարկեցին Դաչայի ճաշարանի ղեկավար Մինասյան Հարությունին. մի քանի հոգի գնում, ուտում-խմում են, իսկ փողը չեն տալիս: Մի օր նա ասում է. «Հերիք է, փողը պետք է մուծել»: Իր ներկայությամբ Ստալինի նկարի աչքերը ծակում են ու ասում. «Մենք չենք սիրում դրան»: Մի քանի օրից բանտարկեցին Մինասյան Հարությունին և նրա վրա դրեցին իրենց իսկ արած գործը:

Պետք է նշել, որ գյուղում ընդհանրապես բժիշկ չի եղել, Մաղաքյան Գրիշայի խորհրդով (ինքը լավ գիտեր այդ բժիշկին) Արմավիրից հրավիրում են Բաղդասարյան Կարապետին, որն եկավ գյուղ 1934թ.: Նրան գյուղի կենտրոնում ձրի տուն տվեցին: Նա աշխատեց երկար տարիներ ու մահացավ 1954թ.՝ ծերության հասակում:

Ինչպես հայտնի է, Արակիչի գետը չորանում էր գարնանը: Որոշեցին առու փորելով հարևան գյուղի գետից ջուրը հոսեցնել Արակիչի գետը, ու ջուրը հոսեցրին, բայց կային մարդիկ, որ սկզբից էլ դեմ էին, ջրամբարը քանդում էին: Գյուղխորհրդի նախագահ Մինասյան Գալուստը գնում է Սուխում՝ Նեստոր Լակոբայի մոտ, ու բացատրում եղելությունը: Լակոբան ուղարկում է իր ներկայացուցչին Աթարա և այդ խնդիրը որոշվում է խաղաղությամբ:

Նախագահին բանտարկելուց հետո վարչության նախագահ ընտրեցին երիտասարդ Կրբաշյան Ղևոնդին, շատ չանցած ազատեցին գյուղխորհրդի նախագահ Մինասյան Գալուստին, տեղը նշանակեցին կին՝ Մինասյան Մարգարիտին: Նա աշխատեց որոշ ժամանակ և ինքը թողեց աշխատանքը, նրա տեղը նշանակվեց երիտասարդ Մինասյան Անդրանիկը: Այդ տարիներին կառուցեցին կոլտնտեսության վարչության շենքը:

Շարունակելի

ԱՆՑՅԱԼԻ ՄԱՄՈՒԼԻՑ

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍ

Սուխում, 26 հունվարի: Տեղական կյանքը, մանավանդ հայկականը, մեռած է բոլորովին. ահա և փաստեր.

ա. Սուխումում ամեն տարի սիրողների խումբը տա-

Սուխում, Թոփչյանների ընտանիքը, 1910-ական թթ.:

լիս էր առնվազն 2-3 ներկայացում, մի երեկույթ և բոլոր օգուտը հատկացնում էր դպրոցին. այնպես որ դպրոցի մուտքի վրա աւելանում էր մոտ 800 ռ., այս տարի մինչև օրս ոչ երեկույթ և ոչ մի ներկայացում տեղի չի ունեցել:

բ. Դպրոցը ունի գրադարան, բայց հոգաբարձությունը 2 տարի է ինչ աչքաթող է արել և միջոցներ չի ձեռնարկում ճոխացնելու գրադարանը:

գ. Սրանից դեռ 3-4 տարի առաջ դպրոցական շենք պիտի կառուցանվեր, սակայն հոգաբարձությունը դեռ շարունակում է 700-750 ռ. քրեի վճարել դպրոցական շենքերին:

ԱՂԱՏԵՎԱՑԻ

«Հորիզոն», 1911, Թիֆլիս, N 23, փետրվարի 2

ՁՅՈՒՆԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կովալևսկի գ. (Ադլերի շրջ.) 6 փետրվ.

Հունվար ամսի 2-ից սկսած մինչև 25-ը, կարճ ընդմիջումներով, անընդհատ ձյուն տեղաց և փչում էր քամին շատ ուժգին:Բարձր տեղերում ձյունի հաստությունը 5-6 արշինի հասավ, իսկ ցածր տեղերում 2 արշինից սկսած աստիճանաբար մինչև 6 արշին:Վնասվեցին և բոլորովին քանդվեցին շատ տներ և ծխախոտասրահներ, քանդվեց նաև Կովալևսկի գյուղի աղոթատունը. փչացան շատ ծխախոտներ, կոտրատվեցին շատ վայրի և ընտանի ծառեր, ջարդվեցին հազարավոր թռչուններ, վայրի կենդանիներ, մարդկանց մեջ տիրում է հուսահատություն, կտրված են ջրաղացների ճանապարհները,բարձրավանդակներում ապրող ժողովուրդը սարսափահար եղած է. դրան ավելի նպաստեց անցյալ ամսի 24-ին պատահած մի աղետալի դեպք. Օվա կոչված հայաբնակ գյուղից վերև (Խրիստաֆորյան կալվածք) գտնվում է «Աջմարտա» ասված սարը, որի ստորոտում շինված են տներ, նրա գագաթից մի մեծ ձյունահյուս բրթելով՝ իր լանջին գտնված ծառերը կոտրատելով գալիս՝ իր տակովն է անում Նշան Օհանյանի,Կիրակոս Բաշյանի, Խաչիկ Գաբիկյանի և Խաչիկ Տաղտեվիրենբունի տները և գոմերը, բարեբաղտաբար դեպքը ցերեկ ժամանակ է պատահում, և գյուղացիք շուտով օգնության են հասնում, ձյունի կույտերի և ավերված տների տակից հանում են 28 հոգի, երեք երեխա մեռած 8-10 տարեկան, իսկ մնացյալներից, ոմանք ստացել են լուրջ ջարդվածքներ և ոմանք բոլորովին անվնաս են մնացել, մեռած են նաև 27 գլուխ զանազան ընտանի կենդանիներ, մի կով միայն վեց օրից հետո ձյունի տակից գտել են կենդանի, տնային բոլոր իրերը, ծախելու պատրաստ ծխախոտը և ուտելու եգիպտացորենը բոլորն էլ անհետ կորել են: Աղետյալները մնացել են շատ ծանր դրության մեջ և գրեթե զուրկ պատսպարանից. այսպիսի ձմեռ ժամանակ, հայտնի է, որ ոչ մի տեղից օգնություն չեն ստանում, իսկ հարևանների արած օգնությունը անբավարար է նրանց ծով կարիքի հանդեպ:

ՎՐՈՒՅՐ

«Հորիզոն», 1911, N 35, փետրվարի 17

Книга о генерале-поэте Кулебякине

Армяно-русские отношения, описанию которых посвящены тысячи и тысячи страниц, как это ни парадоксально, изучены крайне недостаточно. На это в годы советской власти было много причин. Одна из них (и не последняя по важности) – запрет на вполне конкретные темы, события и имена, запрет, который особенно пагубно отразился на исследовании истории богатейших армяно-казачьих отношений, содержащей как яркие страницы победоносного боевого сотрудничества в интересах России и армянского народа, так и скорбные эпизоды поражений, обусловленных предательской политикой в отношении тех же интересов России и армянского народа. Конечно, и прежде, вопреки запретам, усилиями самоотверженных энтузиастов и с той, и с другой стороны предпринимались отдельные попытки осветить армяно-казачьи отношения, однако, думается, создание целостной, научной их истории еще впереди. Была бы добрая воля, осознание крайней нужности этой работы и скромная финансовая поддержка. Какие ждут нас в этом случае бесценные открытия можно судить хотя бы по "первой ласточке" – книге кандидата филологических наук Анушавана Закаряна "Александр Кулебякин и Армения" (под редакцией академика НАН РА Вардгеса Микаеляна), опубликованной 2003 г. по решению ученых советов Института литературы им. М. Абегяна НАН РА и Военного института МО РА им. В. Саркисяна. Участие в издании книги институтов столь разного профиля не случайно. Оно обусловлено многогранностью личности героя книги, терского казака Александра Парфеньевича Кулебякина (1871–?), сочетающей в себе таланты военачальника, поэта и общественного деятеля,

внесшего своим ратным делом и поэтическим словом неоценимый вклад в борьбу армянского народа за свое освобождение. О нем практически мало известно. Между тем в свое время, в 1914–1923 гг., о нем писала армянская и русская печать, его хорошо знали на Кавказе как защитника не только русских государственных интересов, но и интересов армянского народа, причем не только оружием, но и пером.

Освещению деятельности А. Кулебякина и его связей с армянским народом посвящена и эта книга. В обращении к читателю Ан. Закарян подчеркивает, что многогранная деятельность русского военачальника "до сих пор… не исследована: нет целостной работы… посвященной поэту-генералу, несмотря на то, что как военная, так и литературно-общественная деятельность его представляет значительную историко-фактографическую ценность, являясь своеобразными летописными страницами армянской действительности 10-х годов XX века" (с. 7).

В первой главе "Полководец А. Кулебякин в Западной Армении" освещена его служба на Кавказском фронте Первой мировой войны.

Известный словарь профессора С. Венгерова в 1915 г. сообщал: "Кулебякин Ал-др Парф., сотр. "Терс. Вед.", полк. 2 горско-моздок. п. 1912 г." (с. 8). В 1919 г. сам А. Кулебякин писал: "20-го октября 1914 года я с русскими войсками перешел русско-турецкую границу и находился на театре военных действий вплоть по ноябрь месяц 1917 года, последовательно занимал должности с командира полка до начальника дивизии включительно,

причем 5 месяцев, в 1917-м году временно командовал четвертым Кавказским корпусом" (с. 19).

С 6 ноября 1914 г. под началом полковника Кулебякина воевала и 3-я армянская дружина под начальством Амазаспа Срвандзтяна. 25 декабря 1914 г., будучи уже начальником Башкейского арьергарда, в донесении командиру 1-го Кавказского армейского корпуса генерал-майору Пржевальскому он после боев под Кагызманом писал, что во всех боях армянские дружинники "беззаветно шли на явную смерть" и "честно умирали" как "настоящие герои", проникнутые глубоким чувством к родине. А. Кулебякин был участником и свидетелем общего наступления русской армии весной 1915 г., а также ее отступления, создавшегося тяжелого положения, оборонительных боев в Ване. "Восстание ванцев было вызвано систематическими преследованиями армян, не скрывавших своего тяготения к России...,– пишет он.– Турки стремились к ослаблению во всей стране армянского элемента путем экономического разорения, равно как и посредством единичных убийств видных армянских деятелей и массовых арестов и избиений... Ванцы в отчаянии взялись за оружие с решением: или погибнуть с честью, или освободиться (с. 10). Об участии армян-дружинников в занятии Вана он писал: "У всех взоры и мысли, и чувства были обращены в сторону Вана. Занятие Вана стало яркой мечтой армян-дружинников... Никакие трудности не могли ослабить порыва вперед, который охватил армян" (с. 10).

С 17 ноября 1915 г. генерал-майор Кулебякин уже начальник Ванского отряда. В составе его находились также 1-я Армянская дружина под командованием Андраника и 3-я Армянская дружина, возглавляемая Амазаспом. Безусловно, имея в виду и А. Кулебякина, Ов. Туманян в те дни писал: "Военные власти, четко видя находящееся в своей... армии армянство, оценили его самоотверженность и... всегда проявляли хорошее отношение; армянский народ, со своей стороны, служил ей [армии] и любил ее, как родную, и до настоящего дня ни одного недоразумения и недовольства не случалось между армянским народом и русским воинством, и сегодня... молодежь и русский солдат и казак, плечом к плечу, вместе сражаются... против врага России с истинным вдохновением" (с. 16).

А. Кулебякин невольно стал участником и свидетелем пагубного для судеб армян явления – внезапного, немотивированного отступления российской армии. Как честный человек, русский генерал Кулебякин не мог после увиденной трагедии не написать, что необходимо было "надежным образом всеми средствами и способами укрепить уже занятые территории и не на них проводить стремительные маневры, которые, не будучи в достаточной мере подготовленными и укрепленными с тыла, обычно столь же стремительно переходили в отступление, оставляя на произвол судьбы не поспевающее за маневрирующим войском армянское население. А за отошедшими войсками появлялся озлобленный враг и самым варварским способом сводил счеты с теми, кто не успел уйти, т. е. вырезали тех же несчастных армян... Повторяем, что русское командование должно было заранее предусмотреть все это, поскольку для такого предположения оно имело все данные, все примеры" (с. 18).

Следующая глава книги Ан. Закаряна – "Армения в поэзии А. Кулебякина" – посвящена другой ипостаси генерала-поэта. Активно участвуя в военных действиях, А. Кулебякин находит время для изучения истории и культуры армянского народа. Под непосредственным и каждодневным впечатлением от увиденного и пережитого он создает волнующие душу стихотворения, увлекается армянскими народными легендами и эпосом. Это увлечение не было для А. Кулебякина случайным, оно стало органичным продолжением увлечения родным, казачьим фольклором, воплотившимся в 1913 г. в книгу "Гребеничка в плену. Казачья старина". "Ванские" стихи А. Кулебякина не оставили равнодушным Армянский комитет "Верашинутюн", который в 1917 г. на свои средства издал его книгу "Дверь Мехера. Отзвуки Вана".

К счастью, судить о стихотворных произведениях и помещенных в книге содержательных примечаниях мы можем не только по пересказам и анализу Ан. Закаряна. Сборник "Дверь Мехера. Отзвуки Вана", давно уже ставший букинистической редкостью, целиком помещен в разделе "Сочинения. Переводы. Письма. Документы. Статьи", представляющем особую историческую и филологическую ценность. Многие включенные в этот раздел материалы и документы публикуются впервые.

Генерал-майор А. Кулебякин перед "Дверью Мехера" (Ван, 1915г.)

Точно так же, как и любопытнейшие детали послевоенного периода жизни и творчества А. Кулебякина, проведенного им в Тифлисе. Ему посвящены III и IV главы "А. Кулебякин и Ов. Туманян" и "А. Кулебякин и армянские общественные организации". Материал этих глав особо близок автору и как бы продолжает тему "русские литераторы и армянская действительность 1910-х годов", которой он уже посвятил три книги и более 70 научных статей. Здесь, однако, мы остановимся только на двух эпизодах деятельности Кулебякина как военного историка и аналитика.

Первый эпизод связан с работой в "Бюро по установлению потерь армян от всемирной войны", созданным Советом Союзов Центрального Совета армянских землячеств. Известный армянский историк Лео так сформулировал стоящую перед Бюро задачу: "Целью предпринятого Армянскими земляческими союзами дела было представить положение армянского народа в период первой мировой войны, т. е. выполненную им роль, понесенные им жертвы, приобретенные права. Будучи уверенным, что наступает великий день окончательной расплаты, армянский народ должен представить свои требования мировой инстанции и получить возмещение. Предусмотрено было это большое и общенациональное дело претворить в меморандуме, который должен был быть представлен Армянскому правительству, а оно – посредством своей делегации – Парижскому конгрессу" (с. 41). Военно-исторический отдел Бюро возглавил генерал Кулебякин, который с большой ответственностью взялся за выполнение порученного ему дела, понимая, что "-разрабатываемый мною очерк имеет не только специально военно-историческое, но в данный момент также и исключительное политическое значение для дела армянского народа" (с. 46). К сожалению, начатая Бюро работа остается незаконченной, и, как говорил его председатель Ов. Туманян, "...выходит, что весь мир имеет требования, кроме армянства" (с. 50). Тем не менее часть доклада (314 страниц), который подготовил генерал Кулебякин, об участии армян в мировой войне Бюро передало члену армянской делегации на Парижской конференции Пападжаняну. Сотрудник А. Кулебякина Левон Лисицян в 1920 г. писал: "Так как мы осознаем огромное значение настоящего исследования для истории нашего молодого воинства, боевых традиций армянства и укрепления сознания народа, мы должны постараться подготовить к печати на армянском языке полученные от полководца Кулебякина рукописи" (с. 51).

Второй эпизод относится к началу 1919 г., когда представители крупного армянского капитала Закавказья решили рассмотреть вопрос о переводе их предпринимательской деятельности в Армению в целях содействия экономическому, духовному возрождению, укреплению обороноспособности и мощи Первой Республики Армения. С этой же целью в марте 1919г. крупный армянский промышленник И. Л. Маилов с двумя своими братьями организовал на Северном Кавказе – в Кисловодске – "Научно-промышленную экспедицию братьев Маиловых" для изучения реального состояния жизни Армении. Так А. Кулебякину довелось написать еще один доклад – "Военные задачи Армении", сохраняющий свою историческую и теоретическую ценность по сей день. К докладу было приложено "Особое мнение", где он в частности пишет: "Я не могу промолчать о том, что подсказывает мне глубокое внутреннее убеждение, основанное на изучении дела, и личный опыт. Я сам видел и прошел эти исторические места, о которых пишет мое перо. С тяжкими трудами, шаг за шагом одолевала русская армия природу и человеческое сопротивление, и работа ее не должна остаться забытой и безрезультатной. Говорю как русский человек. Если сама Россия ушла отсюда в лице своего сломанного революцией солдата, то пусть плоды вековых трудов моего Отечества достанутся тому народу, освобождению которого от мусульманского ига оно поставило одной из своих задач, исторически стремясь ее выполнить".

Дополняют и обогащают исследование собственные сочинения Кулебякина, его переводы, статьи. Прилагаемые письма и документы, обнаруженные Ан. Закаряном в архивах Армении, вызовут интерес не только специалистов, но и более широкого круга читателей, так как затрагивают самые насущные и болезненные вопросы армянской трагической действительности начала XX века, взаимоотношений русского и армянского народов.

Книга Ан. Закаряна о русском генерале-поэте Кулебякине, несомненно, вносит достойный вклад в изучение ар-

Мой собеседник Роланд Джоджуа. Человек с очень необычным мировоззрением. Работает редактором газет «Абхазия молодая» и «Абхазский университет», является одним из координаторов «Клуба молодых талантов». Окончил Абхазский государственный университет по специальности филолог. В данное время проходит обучение в Кавказсом институте средств массовой информации в Ереване.

- Почему Вы занялись журналистикой?

- Я филолог, а филология напрямую связана с журналистикой. Ведь журналист в своей работе тоже апеллирует словом. И еще, мне нравится то, что журналист должен быть последовательным, осознавать и контролировать собственные интересы, предубеждения или пристрастия.

- Какое различие между журналистом и филологом?

- Различие в подачи информации. В журналистике нужно отдавать предпочтение фактам, а не мнениям. Важна в ней и оперативность, а писатель или же научный деятель может не ограничивать себя жесткими временными рамками.

- Как мне известно, Вас не интересовала ни политика, ни экономика. Но те знания, которые Вы получаете в КИСМИ в сфере политики, экономики и журналистики могут ли изменить Ваш взгляд на мир и считаете ли Вы их нужными для журналиста?

- Я считаю, что мой взгляд на мир уже сформировался и координально изменить его эти знания не смогут. Но в тоже время, хочу сказать, что узнал много нового, благодаря КИСМИ. Журналисту необходимо обладать базовыми знаниями, которые дает институт, но в то же время этого недостаточно для полноценной работы. Надо много работать над собой.

- Каким по Вашему должен быть журналист?

- Должен быть профессианалом своего дела, уважать потребителя информации и знать о предмете, о котором пишет. Доносить до читателя информацию в чистом виде, не смешивая ее со своими эмоциями или отношением. Журналист должен быть беспристрасным, толерантным и уважать политические и религиозные убеждения, культурное и этническое происхождение.

Беседовал Эркин Якубжанов

Эркин Якубжанов, свободный журналист из г.Ош, республика Кыргызстан. Студент четвертого курса Ошского государственного университета. В данный момент проходит годичные курсы журналистики в Ереване, в Кавказском институте средств массовой информации.

- Эркин, Вы учились на четвертом курсе Ошского университета, что побудило Вас приехать в Армению?

- Хотелось изменить свою жизнь. Я всегда в поисках чего-то нового. В данный момент поступаю так, чтобы поменять свой взгляд на мир. Считаю, что это поможет мне в будущем.

- Какие у Вас были ожидания от поездки в Ереван и оправдались ли они?

- У меня была цель – изучить Кавказ, в частности, Армению. Посмотреть как здесь работают журналисты, ознакомиться с культурой Кавказа и пополнить свой багаж знаний. Если говорить о том, оправдались ли мои ожидания или нет, то окончательные выводы я смогу сделать лишь по окончании пребывания в Армении.

- Как Вы себе представляли Кавказ до поездки в Армению и каким видите его сегодня?

- Если сопоставить мои знания о Кавказе до и после приезда сюда, то можно сказать, что я практически ничего не знал о нем кроме того, какие государства расположены в кавказском регионе. Сегодня по мере возможности изучаю культуру и проблемы Кавказа. Для меня открывается другой мир, с присущими ему особенностями.

Я до приезда не знал, что хемшилы (амшенцы) это армяне. Там на родине, в Ошской области у меня есть друзья хемшилы (амшенцы) и с ними много общаюсь. Теперь, когда вернусь, расскажу им об Армении.

Беседовал Роланд Джоджуа

ЕРЕВАН ГЛАЗАМИ ИНОСТРАНЦА

(штрихи к портрету)

Южный Кавказ считается колыбелью цивилизации. Здесь расположено множество древних городов. Это музей истории и современности под открытым небом.

Самолет идет на посадку. Слышен голос, извещающий о прибытии в Армению: «Добро пожаловать в Ереван!» Аэропорт Звартноц. У выхода говорливые таксисты предлагают свои услуги. Принимая вежливые предложения, ты садишься в такси и начинаешь свой путь в город. В машине, обмениваясь вопросами, завязываешь знакомство. Впрочем, водитель интересуется тобой не меньше, чем ты окружающим. Возникает ощущение, что ты въезжаешь в урбанизированное ущелье.

Множество магазинов, супермаркетов, казино, расположившихся по сторонам дороги являются лишь прелюдией.

Вдали показываются и постепенно приближаются массивные строения причудливой формы и цвета. Туф, из которого построено большинство зданий, придает свою, неповторимую прелесть городу.

Поначалу начинаешь сравнивать Ереван с другими городами, в которых бывал ра ньше, но потом понимаешь, что он такой, какой есть, со своей неповторимой архитектурой. Примечателен каскад, у подножья которого сидит черная аргентинская кошка, ставшая одним из символов Еревана. Здесь, в скором будущем, будет открыт музей современного искусства. С каскада город лежит как на ладони. Старые церкви, дома и современные здания, офисы, гостиницы и посольства дружной семьей живут в относительно небольшом городе.

Улицы не многолюдны. На дорогах почти нет пробок, хотя правила дорожного движения мало кто соблюдает. Спустимся в метро. Да, метро в Ереване есть. Это одна ветка. Поезда подходят к станции каждые пять минут. Состав всего из двух вагонов, но и они редко бывают переполнены, хотя это и самый дешевый вид транспорта. Несмотря на то, что зарабатывает средний житель Еревана немного, большая их часть передвигается в маршрутных такси. Этого вида транспорта в Ереване достаточно, но нередко встречаются пассажиры, едущие в маршрутке в позе шахматного коня.

Трудно поверить, что Ереван миллионный город. Но стоит немного удалиться от ценра, как понимаешь, что это впечатление обманчиво. Здесь расположились жилые массивы. Они как муравейники, в которых живут и растят детей жители Еревана. Утром большая их часть покидает свои жилища, а вечером возвращается. Именно в эти часы автобусы и маршрутные такси переполненны людьми, спешащими на работу, в школу, институт или домой.

Вернемся в центр, место, более привлекательное для приезжих. С наступлением сумерек город оживляется. Площадь «Республики» напоминает арену освещенную софитами. Среди фонтанов прогуливаются с детьми взрослые, встречаются влюбленные, беседуют о суете жизни старики.

Ереван привлекает внимание обилием молодежи с удивительным смешением и колоритом нравственных критериев от патриархально-консервативных до европеизированных. Одним из примеров тому служат учебные заведения, ночные клубы, бары и дискотеки. Здесь можно встретить мирно соседствующих представителей различного рода сексуальных меньшинств, людей раскрепощенных, ломающих барьеры и придерживающихся национальных традиций, блюдущих чистоту помыслов и нравов.

Центр Еревана – средоточие интеллигенции. Это опера, театры, музеи, выставочные залы. Здесь каждый найдет себе развлечение по вкусу и обилие клубов, кафе, ресторанов располагает к этому. Как только Ереван стал привлекательным для туристов, присутствие вежливых и обходительных официантов, за которыми как правило присматривают менеджеры, стало тенденцией. Мест, где вам придется скучать за столиком, просматривая меню все меньше и меньше. Среди детей и молодежи пользуются популярностью заведения, в которых можно быстро и дешево поесть, а заодно и пообщаться. Людям респектабельным и состоятельным Ереван может предложить элитные рестораны. Меню в них пестрит, как национальными, так и экзотическими блюдами, в названиях которых сможет разобраться лишь истинный гурман.

Летом особо популярны кафе на открытом воздухе. Но с наступлением холодов они закрываются. Любители посидеть, коих в Ереване немало, за чашкой кофе, чаю, бокалом вина или рюмочкой коньяка заполняют закрытые кафе, чайные, ресторанчики.

На первый взгляд может показаться, что в Ереване мало кто работает. Все только и делают, что отдыхают, общаются и беззаботно проводят дни. Но это нетак. Людям в Ереване живется тяжело. Найти работу не так просто. Зарплаты такие, что прожить на них в лучшем случае можно сводя концы с концами. Трудно сказать, что было бы с людьми, если бы не помощь родственников, живущих или выехавших на заработки за пределы Армении. Несмотря на это, Ереван стремительно растет и развивается. Чтобы убедиться в этом, достаточно пройти по его улицам, пообщаться с людьми.

Светлая и теплая аура Еревана раскрывает перед вами душу и позволяет ощутить дыхание города, пульсирующее в каждом из его жителей.

Роланд Джоджуа

НА ВЕРНИСАЖЕ КАК-ТО РАЗ...

- Все, кому не лень, сейчас говорят о политике, - говорит сорокопятилетний Левон. Он, как и его друзья грелся у костра на вернисаже, находящемся в центре города. По словам Левона, они бурно обсуждали вопрос о вхождении Турции в Евросоюз.

Несмотря на пятиградусный мороз рядом мужчины играют в нарды. Мороз пронизывает тело. То там, то тут топчутся на месте торговцы, кто-то даже разжег костер, к которому тянутся промерзшие руки. Пожилая женщина, пристроившись в стороне, на открытом воздухе варит для желающих кофе.

Левон – мастер по обработке дерева. Работать с деревом его научил отец, когда Левону было десять лет. Всё свободное время он вырезает различные изделия из дерева. Как говорит сам мастер, готовое изделие для него как ребенок, поначалу даже жаль расставаться. Не мало времени проходит с момента выбора материала до готовности изделия. Иногда он трудится день, а иногда неделю и больше.

Левон, как и многие мастера, свою продукцию продает на вернисаже. Здесь можно найти и купить абсалютно всё, начиная от репродукций картин великих художников до старинных монет. Вернисаж предназначен в основном для туристов. Почти все продавцы могут объясниться на ломаном русском и английском языках. В выходные дни южная сторона заполняется торгующими народными изделями и сувенирами, а в северной части можно купить всякую всячину, от поддержанной видео и аудио аппаратуры до шнурков для обуви.

На вопрос, все ли торгующие здесь предметами народного творчества являются мастерами Левон ответил: «Нет, что Вы. Тех, кто делает эти изделия здесь очень мало. В основном это перекупщики. Многие из них даже не имеют представления сколько сил и труда нужно вложить, чтобы сделать, например, деревянную вазу, нарды, или же маленькие амулеты».

К нам присоединился – Ашот, он каменщик, ему сорок, но на вид можно дать только тридцать. Веселый, энергичный, он напомнает артиста эстрады. «Если хотите узнать платим ли мы налоги, то зря тратите время, все равно не ответим» - говорит, шутя.

По словам Ашота, в основном изделия из обсидиан – это стекловидная вулканическая горная порода - красная или серая - с режущим изломом. Изделия из обсидиана очень привлекают иностранцев, особенно европейцев.Он показывает свои изделия, рекомендуя купить на память.

Левон приглашает на чашку кофе. Женщина, которая варит кофе гостеприимно предлогает присесть на табуретки. После глотка горячего кофе становится не так уж холодно. Левон и Ашот начали подробно рассказывать историю вернисажа. По их словам, история вернисажа начинается с площади у оперы. Когда-то на площади у оперы собирались художники, для того чтобы продать свои картины. Но день со днем их становилось больше и больше, и потом власти Еревана решили выделить для них место, в котором ныне продают не только картины.

- И сейчас у оперы продают художники свои картины, - говорит Левон, – почему они до сих пор там, я не понимаю... Наверно, они не хотят, чтобы искусство продавалось рядом с разным барахлом.

Среди разнообразия сувениров на вернисаже выделяется необычная коллекция фотоаппаратов. Сергей, ему семдесять, продает свою коллекцию на вернисаже. Когда-то был фотолюбителем. Поначалу из-за не достатка средств был вынужден продавать свои фотоаппараты, но потом, так как он уже освоил технологию торговли на вернисаже, начал покупать у знакомых старые фотоаппараты и занялся бизнесом. Ассортимент очень большой, начиная от фотоаппаратов позапрошлого века и до самых последних моделей.

Никто не проходит мимо, не поинтересовавшись ярко бросающимися в глаза, кавказскими кинжалами и мечами. Осматривают очень внимательно. Тут же табличка «Руками не трогать!».

Гуляя по вернисажу получаешь представление об истории, жизни и культуре армян.

Эркин Якубжанов

ԱՐՁԱԿ

ԱՇՆԱ

Լրագրողի գրիչը սովորության ուժով միտքս քաշում է հոդվածաշարի ուղղությամբ: Բայց հոդվածի հերոսներն էլ, դեպքերն ու իրադարձություններն էլ քմահաճ են ու ինքնակա. արձակում հույս ունեմ ավելի քիչ կշտամբանքի արժանանալ:

ԱՐՇԱ՞Կ, ԱՐՇԱ՞Կ, ԱՐՇԱ՞Կ...

Դուր աչքերով այդ հայորդու օջախում ամեն առիթով ճոխ սեղան էր գցվում: Ոչ այնքան ուտել-խմելու, որքան իրար հանդիպելու, զրուցելու համար սեղան նստող հայերը հայաբար «իրենց տեղում չէին», ռուսավարի «իրենց ափսեում չէին»: Ուզում էին հարմարվել ու հարմար չէր: Ուզում էին Ռուսաստանում հայ լինել ու ինչ-որ չէր ամբողջանում: Ասում էին.

- Հայաստանն առանց Ռուսաստանի երբեք չի կարողացել ապրել: Հիմա էլ, ահա, եկել ենք, տնավորվել, բնավորվել, վերադառնալու մտադրություն էլ չունենք: Հայաստանում ապրելու հնար ու ճար չկա:

Ու երբ ռուս սեղանակիցը, թարսի պես՝ հենց այդ խոսքիդ վրա, բաժակ է բարձրացնում Հայաստանի կենացը, ինչ-որ բան իրար չի գալիս, չի կպչում: Չի լինում, է՛լի, մանավանդ որ այս մեծ հիմնարկի պետ, դոլարով միլիոնատեր ռուսն էլ անպարկեշտ կատակներ, թափանցիկ ակնարկներ է անում, անամոթ անեկդոտներ է պատմում, ու չգիտես՝ գլուխդ որ քարով տաս: Երկիրը՝ իրենը, հողը՝ իրենը, պետությունը՝ իրենը, իր համար աշխատածդ՝ իրենը, քեզ համար աշխատածդ էլ՝ իրենը: Թե ուզեց, քեզ կտա:

Կարծես թե պետք է ասես, գոնե ակնարկներով, հեռվից գալով հասկացնես, թե՝ գիտե՞ս ինչ, մեծ եղբայր, մենք... մեր կանայք..., ձեր կանայք..., մեր բարքերը... մեր ամոթխած կանայք...: Բայց ինքը հայ սիրուհու հետ է, և սիրուհին կարծես շառագունած չէ: Որեմն, թե՝ դո՞ւք, ձեր կանա՞յք... մե՞ր կանայք... Մանավանդ, բազմիցս նկատել ես, թե ոնց են հաճոյախոսում հայրենակցուհիներիդ: Զարմացական հայացքները հետաքրքրախույզ են դառնում, հետո՝ հանդուրժող, ընդունող, հետո՝ հիացական: Էկզոտիկ մրգի արտասավոր համի պես:

Ու ոտքիդ տակից հողը սկսում է փախչել: Օտար երկրում նոր ես զգում, որ հայոց հողը գնում է: Մինչև հիմա համոզված էիր, ուր էլ գնաս՝ հայ ես ու Հայաստան ունես քո մեջ: Այդ Արշակն էր, որ միայն հայկական հողի վրա էր առյուծ կտրում, պարսկական հողի վրա աղվես էր դառնում, իսկ դու...

- Ե՞ս... ես՝ ի՞նչ...

Արշա՞կ, Արշա՛կ, Արշա՛կ...

ՀԱՅ ԿԻՆԸ ՔԱՐ Է

–Արդեն մի ամիս է... Ամեն օր, պատկերացնո՞ւմ ես, ամեն օր զանգում, ասում է՝ վաղը անպայման... Ու չի գալիս: Խաբում են, իրեն էլ խաբում են: Լավ աշխատող է, չեն ուզում բաց թողնել: Իսկ ես այլևս չեմ կարող: Այլևս չեմ դիմանում: Նյարդերս դավաճանում են, ճնշումս 220 է հասել: Քայլում եմ, աչքերիս առջև մշուշ է կարծես: Ես կմեռնեմ: Ինձ թվում է՝ մեռնում եմ: Ամեն օր ասում է՝ վաղը՝ անպայման, վաղը հաստատ գալու ենք: Մի ամիս է արդեն...

Խղճում եմ: Մխիթարության խոսքերը շրջանցելով ուզում եմ հանգստացնել: Միայնակ, ծանր ճակատագրի տեր կին է: Զգացմունքը, թե առաջացած տարիքը տագնապ են հաղորդել այդ հայ տղամարդուն նրա կապվածությանը: Մի քիչ էլ ազգին ու երկրին հատուկ հիվանդագինություն:

Իմ ճնշումը նորմալ է, նույնիսկ՝ ցածր, բայց իմ աչքին էլ հաճախ բաներ են թվում: Օրինակ՝ փողոցով քայլում եմ, թվում է՝ ինքս ինձ վրա եմ հակված, իսկ իրականում հաշվում եմ 1, 2, 3, 4, ահա այս 5-րդ կնոջ տղամարդը, ամբողջացումը, այս երկրում չի ծնվել, չկա, պետք է ներմուծվի: Մեծաքանակ ազգ է, սրա 5-րդները մի քանի իմ ժողովրդի նմանի կուլ կտան, գեների մեջ փոփոխություն էլ չի նկատվի: Կմարսեն, կյուրացնեն, կվերջացնեն:

Ու աչքերիս դեմ հայտնվում են վամպիրներ, հրեշներ՝ հրաշալի, կանոնավոր դիմագծերով, անթերի սպիտակ մաշկով, սլացիկ, ինքնավստահ, որսորդ:

Մի ամսվա մեջ հոգեկան հավասարակշռությունը խախտված, սիրտը շարքից դուրս եկած այս ռուս կնոջ պատմական անունով հայ սիրեկանը Հայաստանում կին ունի, երեխաներ, մայր, որոնց հիշելիս, մանավանդ, եթե օղու օժանդակությունն էլ կա, արտասուք թափելուց չի ամաչում: Բայց որոնց չի տեսել արդեն 5-6 տարի: Եվ ասում է.

- Ես սիրում եմ իմ կնոջը: Գիտե՞ս ինչ կին ունեմ՝ խելացի, գեղեցիկ, հասկացող:

...Ի՞նչ ես ասում: Այդպիսի բա՞ն անի, կսպանե՛մ: Հրաշալի երեխաներ ունեմ. աղջիկս համալսարան է ընդունվել: (Կինը, մայրը հերթով զանգել են, խնդրել, որ գոնե ուսման վարձին օգնի: Փող, իհարկե, չունի, չի ուղարկել, բայց հո տեղեկացված է, կարող է պարծենալ):

- Օ՜հ, մայրս, ես մորս ցավը տանեմ, ի՜նչ տղամարդ կին է, նա թույլ չի տա, որ ընտանիքս պակասություն քաշի:

«Գեղեցիկ, խելացի ու հասկացող» կինն էլ մխիթարվում է.

- Գիտես՝ ինչ ամուսին ունեմ: Խի՛ստ, խանդո՛տ: Կսպանի՛, հաստա՛տ կսպանի:

ԹԵԹԵՎ ԱՊՐԻՐ

Զահել հայուհին եղբորն ուղեկցեց մինչև մաքսային անցակետը և վերադարձավ: Բայց դեռ անհանգիստ էր. հանկարծ հետ չգա:

Սպասեց մինչև ինքնաթիռի մեկնման մասին հայտարարությունը: Վստահ լինելու համար ճշտեց տեղեկատու աղջկանից: Նոր միայն շունչ քաշեց թեթևացած:

Անծանոթ լինելու հանգամանքը թերևս ոչ միայն խոչընդոտ չէր, այլև դյուրացնում էր սիրտը թեթևացնելու պահանջին հանձնվելը: Ամենայն հավանականությամբ այլևս երբեք չէինք հանդիպելու, և եթե զղջար էլ ամեն ինչ ասած լինելու համար, ստիպված չէր լինելու ամաչել:

Վերջին տարիներին հայաստանցի չլինելը հայ տղաների արժանիք է դիտվում, հայաստանցի լիները՝ հայ աղջիկների: Եվ այս երկու արժանիքները ձգտում են համընկնել, թեև հաճախ չեն համատեղվում:

Ահա այս հայուհին էլ ամուսնացել էր մոսկվաբնակ հայ երիտասարդի հետ: Մոսկվայում մոսկվացուց ռուս, ռուսից ավելի ազատաբարո հայորդուն զարմացնում է դեռատի կնոջ հետամնացությունը: Ու դաս է տալիս.

- Այստեղ ուրիշ բարքեր են: Սիրուհի ունենալը սովորական է և անխուսափելի: Թեթև ապրիր էս դժվար կյանքը:

Եվ որպես կյանքը թեթևացնելու միջոց՝ կնոջը մի շքեղ ծաղկեփունջ է ուղարկում՝ հավանաբար նաև հաշտությունը զարդարելու հույսով:

Բայց գործից վերադարձող ամուսնուն փոշեկոլոլ ու զգզգված ծաղկեփունջը դիմավորում է լուսամուտի տակ: Պատվախնդիր ամուսինը շտապով բարձրանում է երրորդ հարկ, անարգված ծաղկեփնջի համար հաշիվ պահանջում կնոջից: Եվ չարաբաստիկ պատահականությամբ հենց այդ պահին պատուհանի ապակիները սրբող կնոջը հրում-գցում է երրորդ հարկից ցած:

Իհարկե՝ ոստիկանության համար նրանց ընտանեկան կյանքում համերաշխություն է տիրում, իհարկե՝ նրանց վեճի ձայնը հարևանները լսած չկան, ամուսինը նույնիսկ տանը չի եղել դեպքի պահին, պարզապես ամուսնու ուղարկած ծաղկեփունջը գուրգուրելիս սայթաքել է և ծաղկեփնջի հետ լուսամուտից ընկել ցած: Բարեբախտություն է բոլորի համար, որ ողջ է մնացել:

...Ու հիմա մի քանի օրով հյուրընկալվող եղբորը Հայաստան ճանապարհելով՝ ջահել կինը թեթևացած շունչ է քաշում. լավ է՝ գնաց, հանկարծ ականջը չգցեն, թե իրականում ինչ է պատահել:

ԵՍ ՈՒ «ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ»

Միշտ համոզված էր եղել, որ ոչինչ ի զորու չէ իր հավասարակշիռ կեցվածքը խախտել, ստիպել վայելչության սահմաններից դուրս գալ: Ու հիմա ոռնում էր անկարելիության աստիճան: Անելանելիությունից, անճարությունից: Գիտեր՝ այդ մեծ քաղաքը, որ աշխարհասփյուռ իր ողջ ազգից էլ շատ բնակիչ ունի, անտարբեր է արցունքների հանդեպ, անկարեկից:

Քաղաք-հսկաների ճակատագիրն է դա, դժբախտությունն ու գոյության միակ հնարավոր ձև: Բայց դրանից իր ցավը չէր մեղմանում: Անկարելի էր թվում ներել

ինքն իրեն այդ հիմար որոշումը կայացնելը: Թե առևտուրը քո ի՞նչ բանն էր, նախնիներիդ մեջ գոնե մի հատ առևտրական եղե՞լ էր, ամենածանր պայմաններում գոնե մի՞ բան, առածդ գնից էլ էժան, ծախած կայի՞ր: Իհարկե՛, պիտի խաբեին, երբ դեմքիդ դրոշմված է խաբվելուդ պատրաստակամությունը: Ու հիմա դատափետի՛ր, դատապարտի՛ր, կուզես քեզ կառափնարան հանիր կամավոր ու ինքդ քեզ այդպես անհուսորեն ողբա, ո՛ւշ է: Եվ աշխատիր չհիշել, թե ինչպես ինքնակամ, նույնիսկ հաճույքով (կարծես դրա համար էիր ամիսներով կար արել, կոպեկ-կոպեկ հավաքել, հետո էլ ամբողջ գիշեր անքուն ճամփա կտրել) այդ խաբեբաներին հանձնեցիր ձեռքիդ եղած ողջ գումարը: Ու դեռ մի բան էլ ուրախացար, թե՝ ահա իսկական առևտրականները՝ փողդ Մոսկվա կվերցնեն, Իվանովո քեզ կտան, դու էլ կազատվես առևտուր անելու տհաճությունից:

Մինչև կիսականայիր, որ «բարեկենդանին» այլևս չես տեսնելու ոչ ա՛յդ, ոչ էլ մյուս տարում, մինչև կսթափվեիր...

Բայց ուշ է արդեն:

Երրորդ օրն է՝ չգիտես ինչ անելդ, ո՞ւր գնալդ և ոչ մի ինչուի պատասխան չունես: Ու քայլում ես այդ օտար քաղաքի փողոցներով՝ այլևս անպետք բեռնասայլակը՝ առևտրականների այդ անբաժան ուղեկիցը քարշ տալով, որպես անփոխարինելի «ճիտին պարտք» ու, չգիտես ինչու, մտնում ես մետրոյի պատահած կայարանը:

Հագնված ես այնպես, կարծես ոչ թե «Չերկիզովսկի», այլ հյուր ես գնում, ձեռքիդ բեռնասայլակի հետ էլ անգամ ամենահեռավոր առնչություն չունես...

...Դիմացից բարձրացող բարետես երիտասարդը մոտենում է, լուռ առնում քեզ չենթարկվող սայլակդ, հետ դառնում, աստիճաններով իջեցնում, քնքշությամբ ու կարեկցանքով գրկում ուսերդ ու շշնջում. «Մի հուսահատվեք: Ամեն ինչ լավ կլինի: Ես Կրասնոդարից եմ: Ամեն ինչ լավ կլինի»: Ասում է ու հեռանում:

Պետք է տուն դառնալ: Հիմա անհանգստությունից խենթացան հարազատներս:

Գծանկարները՝ Աշոտ Գրիգորյանի

ՊՈԵԶԻԱ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՊԱՏԿԵՐ ԱՐՏԱԳԱՂԹԻՑ

Պահարանի գլխին՝ խաղալիքներ
շարված՝
Բրդոտ արջուկ, շնիկ, կատու մի ծեր.
Այս էլ քանի տարի նրանք չեն իջել ցած,
Իրենց տերերի հետ չեն խաղացել:

Այս էլ քանի տարի վարից
նրանց նայում,
Տատիկ-պապիկներն են հառաչում լուռ.
Խտացել է օդում մի կարոտած հարցում՝
Ու՞ր են թոռնիկները, գնացին ու՞ր...

Այս էլ քանի տարի բնակիչներն
այս տան
Ամեն Աստղծու օր, լուսաբացից
Սպասում են՝ սրտում հույսի
աղոտ մի ձայն
Թոռնիկների հրաշք վերադարձին...

Սեպտեմբեր, 2003թ.

ԵՎԳԵՆԻ ԵՎՏՈՒՇԵՆԿՈ

Օ՜, ո՛չ,
նա՜ չէ ռուս եղբայրը հայի,
Ով նրա վիշտը կիսել չի՜ ուզում.
Կոնյա՜կ է կոնծում միայն արխային
Կամ ձեր ռադիոյի անեկդոտն ասում.
Այլ նա՛ է,-
մո՜տ է ում սրտին ու հոգուն,
Ձեր բախտը դաժան,
բա՛խտը հայկական,
Ով այնպե՜ս է ձեր խորունկ վիշտն
զգում,
Ինչպես զգում է վի՛շտն իր սեփական...
Մենք շա՜տ ենք մեկտեղ տառապել
կյանքում,
Նույն կռվի դաշտում՝ զոհ տվել
այնքան.
Երբ եղբայրությունն արյա՜մբ է
կնքվում,
Այնտեղ փոքր ու մեծ եղբայրներ
չկա՛ն...
Դրանից չէ՞,
որ խլված չար ձեռքով,
Սակայն անբաժան՝ իմ եղբոր նման,
Մասիսն, աղերսով ու կշտամբանքով,
Ինձ, որպես հայի, կանչո՜ւմ է հիմա...

Ես գիտե՛մ, մի օր աշխարհից արար
Կջնջվե՜ն սահման ու սահմանագիծ,
Լոկ ծիածա՜նը կկապի կամար,
Եվ ես... Մասիսը կսեղմեմ կրծքի՛ս...

Իսկ թե ոչ...
(միայն թե ուժս ների՜...)
Այդ սուրբ բեռի տակ թեկուզ փշրվեմ,
Ես Մասիս սարը կառնեմ ուսերիս
Եվ մեն-միայնակ այստեղ կբերեմ:

Թարգմանեց Գևորգ Էմինը

ЕВГЕНИЙ ЕВТУШЕНКО

АРМЯНСКАЯ ЛОЗА

Я прикрываю тайные сомнения,
я прикрываю тайную слезу,
как прикрывают от зимы в Армении
землею виноградную лозу.
Когда землей при жизни засыпают,
то силы тайные во мне не
засыпают.
Кто любит землю ту, что стала
Родиной,
тот даже под землей –
не похороненный.
Пускай распалось тело,
опустело:
Земля – теперь мое второе тело,
и сердцем сделался
земли живой комочек,
проросший к небу
стебельками строчек.
И я не умер.
Под землей я зрею.
Не потерял я под землей лица,
Землею я прикрылся лишь на время,
как всякая армянская лоза.

1983 г.

ОЧЕРЕДНАЯ ДЕПОРТАЦИЯ С КУБАНИ ГРАЖДАН АРМЕНИИ

Очередная депортация нелегально находившихся в России граждан Республики Армения (РА) прошла 25 января в Краснодаре. Из краснодарского аэропорта на родину было депортировано 6 граждан РА. Каждый из депортированных находился в России, не имея на это официального разрешения. Отныне по решению суда они не смогут приехать в Россию ближайшие 5 лет.

В КРАСНОДАРЕ СОЗДАН КООРДИНАЦИОННЫЙ СОВЕТ АРМЯНСКИХ ОРГАНИЗАЦИЙ ГОРОДА

Ряд действующих в Краснодаре армянских организаций объединились в новую общественную структуру - Координационный Совет (КС) армянских организаций города Краснодара. Целью новой структуры является координация усилий в проведении совместных мероприятий и согласования других вопросов.

Главным в деятельности КС в 2005 году станет организация мероприятий, посвященных 90-летию Геноцида армян в Турции. Первыми в ряду этих мероприятий стали: показ художественного фильма французского режиссера Роберта Кешишяна "Арам", повествующий о жизни и деятельности современных армянских фидаинов, посвятивших себя возмездию за преступление, совершенное против армян в 1915 году, а также издание плаката-карты Геноцида армян 1915-1923 гг., предназначенной для бесплатного распространения.

СПРАВКА: Организации – члены КС, сохраняют независимость в своей деятельности и вольны проводить собственные мероприятия по собственным планам и графикам без согласования с другими организациями - членами КС. Состав КС открыт для вступления в него других организаций, в том числе и действующих вне города Краснодара. В состав КС вошли: Армянский культурный центр города Краснодара, Армянская церковь города Краснодара, газета армян России «Еркрамас», Армянский научный, информационно-культурный центр «Амшен», краевое представительство Ассоциации Российско-армянского делового сотрудничества (АРАДЕС), Центр культуры и образования «Нарек», молодежное объединение «Еркир», общественное объединение «Зов Родины».

СВОЕ 15-ЛЕТИЕ ОТМЕЧАЕТ СОЧИНСКОЕ ОБЩЕСТВО АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ «СЕВАН»

Пятнадцатилетие со дня основания отмечает в Сочи городское Общество армянской культуры. Торжественное мероприятие посвященное этой дате прошло 28 января в сочинском кинотеатре «Спутник». Общество «Севан» является одним из самых организованных и эффективно действующих армянских организаций Краснодарского края. На прошедших в декабре 2004 года выборах в городское собрание Сочи, несколько представителей Общества одержали победы и стали депутатами.

ПО ИТОГАМ 2004 ГОДА

Российский Национальный исследовательский центр телевидения и радио по итогам уходящего года определил 50 наиболее влиятельных персон в формировании программной и информационной политики, а также в принятии управленческих решений. По результатам данного рейтинга наиболее влиятельным менеджером государственной радиокомпании 2004 года назван председатель радиостанции "Голос России" Армен Оганесян.

"ԵՐԿՐԱՄԱՍ"

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԿՈՒ ԵՐԳ

1981թ. սեպտեմբերին էր. պետք է գիշերեմնք Սոչիի Լազարևսկի շրջանի Զուբովա Շչել հայկական գյուղում՝ Սեդրակ Շիշմանյանի տանը, որպեսզի առավոտյան շարունակելով ուղին հասնեինք Շահումյան: Կիրճն այնքան նեղ էր, որ այնտեղ հազիվ էին տեղավորվում Չեմիտոկվարջե գետն ու նրա երկայնքով ուլունքաշար ձգված 70-75 տները: Շիշմանյանը յոթանասունն անց, առույգ, կոկիկ հագնված տղամարդ էր, շուրջ քառասուն տարի դպրոցի տնօրեն ու ուսուցիչ էր աշխատել Հյուսիսային Կովկասի տարբեր գյուղերում և Դերբենտում: Նրա թուլությունը համշենյան երաժշտությունն էր: Դեռ վաղ լուսաբացին միացնում էր ձայնագրիչը և ողջ օրը կողքից չէր հեռանում: Եթե իմանար, որ 100-200 կմ հեռու լավ քեմենչե կամ քեմոնա

նվագող կար, քունը չէր տանի, անպայման կգնար և կձայնագրեր: Նա ինքն էլ հիանալի նվագում էր և Համշենի բարբառով երգեր հորինում:

Առավոտյան յոթին արթնացանք Շիշմանյանի ձայնագրիչի ձայնից: Գիշերն անձրև էր եկել և վարարել էր Չեմիտոկվարջե գետը: Շիշմանյանի տղայի՝ Ալեքսեյի հետ գնացինք գյուղը լուսանկարելու համար հարմար տեղ փնտրելու: Բարձրացանք դիմացի սարալանջը, բայց որտեղից էլ դիտում էինք նեղ կիրճի երկայնքով ձգվող գյուղը, լուսանկարչական օբյեկտիվը փարթամ կանաչի մեջ թաղված տների տանիքների հազիվ մի մասն էր ընդգրկում: Սարալանջին երևում էին մոտ երկու մետր հաստության պատերի հիմքեր:

- Իշխան Զուբովի ամառանոցի մնացորդներն են, - պարզաբանեց Ալեքսեյը, - այստեղ նա իր բազմաթիվ սիրուհիների հետ քեֆ է քաշել: Նրա նմանները վաղուց չկան, բայց ահա, չգիտես ինչու, նրա անու-

նով է շարունակվում կոչվել այս գեղատեսիլ կիրճն ու այս հայկական գյուղը: Գուցե ճիշտ կլինի գյուղին նոր անու՞ն տալ:

Ոչ շատ հեռու, մացառների մեջ երևում էին բետոնե աստիճաններ: Շուրջը ոչ մի հետք չկար: Միայն աստիճաններն էին, որոնք ոչ մի տեղ չէին տանում: Ալեքսեյը բացատրեց, որ աստիճանները հայկական յոթնամյա դպրոցից են մնացել, իսկ դպրոցը քանդվել է 1968-ին:

- Այժմ մեր երեխաները գնում են Կատկովա Շչել գյուղի դպրոց, ուր երկուսից չորրորդ դասարաններում հայերեն են անցնում, բայց մինչև տասներորդը ավարտելը՝ մոռանում, - ասաց Ալեքսեյը, - նախկինում, երբ դպրոցը մեր գյուղում էր, աշխույժ էր նաև գյուղի մշակութային կյանքը: Կային թատերական ու ասմունքի խմբակներ, կազմակերպվում էին հետաքրքրական երեկոներ: Թատերական խմբակում ես էլ եմ խաղացել: Խաղում էինք «Չար ոգի», «Աշուղ Ղարիբ», «Արշին մալ-ալա», «Շահ Իսմայիլ», «Պըլը-Պուղի»:

- Սառե, էլ ի՞նչ էինք խաղում, - կնոջը ձայնեց Ալեքսեյը:

- «Ուշ լինի, նուշ լինի»:

- Ես ու Սառեն էլ հենց այդ թատերական խմբակում ենք ծանոթացել, - մանրամասնեց նա: - Նախկինում գոնե տարին մեկ Հայաստանից որևէ խումբ էր գալիս, իսկ արդեն երեք տարի է, որ ոչ ոք մեզ չի հիշում:

Այս կարգի բողոքներ լսեցի երկրամասի բոլոր այն վայրերում, որտեղ եղա: «Հայաստանը մեզ մոռացել է, ոչ ոք չի գալիս», այնինչ այստեղ կարոտ էին հայ երգին, ծարավի էին հայերեն ներկայացման:

Հրաժեշտից առաջ Սեդրակ Շիշմանյանին խնդրեցի, որ ձայնագրելու համար իր հորինած երգերից երգի: Նա սիրահոժար նվագեց և երգեց «Գազոնկի երկը» և «Չոբնին երկը»:

ԳԱԶՈՆԿԻ ԵՐԿԸ

Նահրեցին գազոնկին երկը,
Հինա տըրին հայսին ծեռկը,
Ջինսը-ջինսով ձաղիգ պերին,
Հընու հայսին թիլը տըրին:

Խըշոն կուտնի ուրբա պերին,
Ալտուն մադնի, քիպա պերին,
Թընգըր-մընգըր ֆեսը տըրին,
Գազնեցին ու սիսը պերին:

Հայս գազնին գու հայսին օդին,
Ջըռակտած ա միճուն կոդին,
Հայսնառ ունինկ լոտի-լոտի,
Հայսը հակավ լակի փոտին:

Ցոլցըլա գու աստղերուն բես,
Չիկա ադմոն քասումնուն նես,
Արև, արև, արի տուն դես,
Վըռվըռա գու հայսն ալ քու բես:

գազոնկ - նորահարսին հարսանեկան զգեստը հագցնելու արարողությունը
նահրեցին - սկսեցին
հինա տըրին - հինա դրեցին
հայս - հարս
ծեռկը - ձեռքը
ջինսը-ջինսով - տեսակ-տեսակ
թիլը տրին - քողը գցեցին
խըշոն - խշխշան
կուտնի - հաստ ու փայլուն կտոր
ուրբա - զգեստ, շոր
ալտուն մադնի - ոսկե մատանի
քիպա - կապա, վերնազգեստ
գազնեցին - հագցրեցին
սիսը պերին - տեսքի բերեցին
հայսին օդին - հարսի սենյակում
ջըռակտած ա - ճառագում է, փայլում է
միճուն կոդին - մեջքի գոտին
հայսնառ - հարսին բերելու գնացած հարսանքավորներ
ունինք - ունենք
լակի փոտին - լաքե կոշիկ
չիկա ադմոն - չկա այդպիսին
քասումնուն նես - սիրուհիների մեջ
վըռվըռա գու - վառվռում է

ՉՈԲՆԻՆ ԵՐԿԸ

Չոբոն իմ, չոբոն, ես՝ սարի չոբոն,
Չալելըն գեշտոմ՝ օչխըյնիս կուկոն՝
Չոմբախ-գոդեշվեր, փըռված սար ու ծեր.
Չայիր-չիմանը գուդա գատ ու սեր:
էհե՜- հե՜յ, էհե՜- հե՜յ,
Պոմբագ ղուզիգնիս,
Ջըղդիգ - սուսիգնիս,
Օնուշ խեդ գերեկ,
Գատ ու սեր պերեկ:
էրգըն բայիրին սարին ա, սարին,
Օչխըյնին, կայդիս, գայծին չայիրին,
Չոբոն իմ սարին ես յոխճկը դարին,
Յոմճին՝ դուն-դեղըս, յաստուղըս՝ քարին:
էհե՜- հե՜յ, էհե՜- հե՜յ,
Չոբոն իմ սարին ածոն, օչխըրին,
Յոմճին՝ դուն-դեղըս, յաստուղըս՝ քարին:
Շահիննին կուկոն ինձի միսաֆիր,
Սեղոնըս լիկը, սըրա տիր ու տիր,
Կինու-վոտկի դեղ՝ գարգուդ - ծունի ճուր,
Փըճա գու քոմին, սարը չունի տուռ:
էհե՜- հե՜յ, էհե՜- հե՜յ,
Չոբոն իմ սարին ածոն, օչխըրին,
Յոմճին՝ դուն-դեղըս, յաստուղըս՝ քարին:
Չըռված գաղնին ա սայվոնըս սարին,
Ճածուգը՝ լաշի, դեշիմըն՝ գաշի,
Կիշեյն օր կա յու արևը մարի,
Շընեյս իմ ած ու օվլըղնուս գաշին:
էհե՜- հե՜յ, էհե՜- հե՜յ,
Չոբոն իմ սարին ածոն, օչխըրին,
Յոմճին՝ դուն-դեղըս, յաստուղըս՝ քարին:
Սարերուն դապին ես կայդաս թապիմ,
Աճվիս արևին խաշին ու գեպին,
Ծըմեռը կուկա՝ փըճա գու բորոն,
Շընեյս հաճին գու, սարերը գոյդոն:
էհե՜- հե՜յ, էհե՜- հե՜յ,
Չոբոն իմ սարին ածոն, օչխըրին,
Յոմճին՝ դուն-դեղըս, յաստուղըս՝ քարին:
Չոբոն իմ, չոբոն, ծըմեռ ու կարուն,
Փըռված ա սիրիս Պարխար սարերուն,
Մեծ ախպըյդակըս Մասիսըն կուկոն,
Քաճկարին դապին տընիմ գու սեղոն:
էհե՜- հե՜յ, էհե՜- հե՜յ,
Չոբոն իմ սարին ածոն, օչխըրին,
Յոմճին՝ դուն-դեղըս, յաստուղըս՝ քարին:

չոբնին երկը - հովվի երգը
չալելըն գեշտոմ - նվագելով գնում եմ
օչխըյնիս կուկոն - ոչխարներս գալիս են
չոմբախ - հովվի երկար մահակ՝ վերին մասում եղջյուրի նման ելուստով
գոդեշվեր - եղջերավոր
չայիր-չիմանը - մարգագետինը
գուդա գատ - կաթ է տալիս
պոմբագ ղուզիգնիս - բամբակ գառներս
ջըղդիգ - սուսիգնիս - ճղացող (ճչացող) սուսիկներս
օնուշ խեդ գերեկ - անուշ խոտ կերեք
գատ ու սեր պերեկ - կաթ ու սեր բերեք
էրգըն բայիրին սարին ա - երկար սարալանջին հով է
կայդիս գայծին - մեղեդուս տակ արածում են
յոխճկը դարին - ողջ տարին
յոմճին - յափնջին
յաստուղըս - բարձս
շահիննին - բազեները
միսաֆիր - հյուր
ծեր - ձոր
սեղոնըս լիկը - սեղանս լիքը
սըրա տիր ու տիր - միշտ դիր ու դիր
կինու-վոտկի դեղ - գինու-օղու փոխարեն
ծունի ճուր - ձյան ջուր
գաղնին ա - պնդուկի ծառն է
սայվոնըս սարին - քոլիկս (հոլիկս) սարում
ճածուգը - տանիքը
լաշի - մրտավարդ, բաց վարդագույն ծաղիկներով մշտադալար մեծ թուփ
դեշիմըն՝ գաշի - հատակը՝ կաշի
կիշեյն օր կա - գիշերը որ գա
շընեյս - շներս
ած - այծ
օվլըղնուս գաշին - ուլերիս են նայում (հետևում)
դապին - գագաթին
գոյդոն - որոտում են
ախպըյդակըս - եղբայրներս
բորոն - բորան, բուք
սիրիս - հոտս
աճվիս - աչքերս
գեպին - եփում են
Պարխար - լեռնաշղթա Համշենի հարավում
Քաճկար - Քաջքար, Պարխարյան լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը

«ՀՅ» խմբագրությունը շնորհակալություն է հայտնում ՀՅԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի գիտաշխատող Սահակ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ՝ համարի բանահյուսական նյութերի տառադարձությունը ճշտելուն աջակցելու համար:

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՄԸՆԻՆԵՐ

Մընի գասինկ, խաղոնկ գու,
Խալվուտը իրար գաշինկ,
Յե՞պ բիդի միյ սըրը կա,
Ալ ինճկա՞ն իրար աշինկ:

Առժին ջուխկը ձըռեծի,
Չավրաս դագը փըռեծի,
Հոյդ-մոյդ ինճիգ ասիլ մի
Քեզի նամագ կըրեծի:

Չայկարին ճըրը կալըս
Ջոմպուն ինձի կըշտեծար,
Իրար ինճիգ ալ չաստակ,
Ամա իրար հասկընծակ:

Չալա, քամանճաս, չալա,
Չալա յոր, չալուգ ըլլիս,
Ճահելնին վըձըռտկոն գու
Տուն ալ համան քուն գըլլիս:

Աստարի հավողը բոլ ա,
Կինի գըլլի, քեֆ գըլլի,
Դղակն ալ պանագը կուկոն,
Հայսնիկ գըլլի, բար գըլլի:

Դոնձի ձառին դոնձ գըլլի,
Գաբված շունը սարտ գըլլի,
Յավաշ խորատա, ախճիգ,
Խալվուտ դեղը մաշտ գըլլի:

Բարին աշեծեկ, բարին,
Փեսային ու ուր յարին,
Ըմուն իրար սազին գու,
Ինճպես ցորինն ու կարին:

Խաղ մը կիդիմ, չիմ ասիլ,
Բահիմ պարգիտնին գասիմ,
Նենեգըս քատա գեպա,
Հըմ գուդիմ ու հըմ գասիմ:

Մընի ասուշ ես էգա,
Հեդը սեր ուդուշ էգա,
Սերը իմ մերաղըս չա,
Նըշոնլուս դեսնուշ էգա:

Տուն ախճիգ իս, մալ կուզիս,
Ուսիդ պարագ շալ կուզիս,
Յեպ օր միյ դունը կաս նա,
Օտկիդ կոնտուրա կուզիս:

Հիշողությամբ գրի է առել
ՀԱՄԵՍՈՒՀԻ ՍԱՐԵՅԱՆԸ

Ծնվել է 1920թ. Աբխազիայի Գուլրիփշի շրջանի Ծեբելդա գյուղում, այժմ բնակվում է Երևանում:

խաղոնկ գու - այստեղ՝ պարում ենք
խալվուտ - թաքուն
սըրը կա - ժամանակը գա
առժի - հաճարի ծառ
չավրաս - թաշկինակս
ջուխկը - ճյուղը
ինճիգ - ոչինչ
Չայկար - աղբյուրի անուն է
ջոմպա - ճամփա
կըշտեծար - հանդիպեցիր
չաստակ - չասացինք
չալուգ ըլլիս - նվագող լինես
վըձըռտկոն գու - թռչկոտում են, աշխույժ շարժումներ են անում
համան - անմիջապես
հավող - խաղող
դղակն ալ - տղաներն էլ
պանագը - բանակից
սարտ - այստեղ՝ հաչան, կատաղի
խորատա - խոսիր
մընի ասուշ - մանի ասելու
մերաղ - մուրազ, ցանկություն
նըշոնլուս - նշանածիս
սեր ուդուշ - կաթի սեր ուտելու
կոնտուրա - կոշիկ
պարգիտնին - բարեկենդանի ժամանակ

19-րդ դարավերջին փախչելով թուրքական ջարդերից՝ Սարգիս պապս ընտանիքով բնակություն է հաստատում Աբխազիայի լեռնային Ազանտա գյուղում: 1929-30թթ., երբ մենք արդեն 10-13 տարեկան երեխաներ էինք, ձմռան երկար գիշերներին հայրս՝ Հակոբ Յալանուզյանը մեզ զանազան պատմություններ, հեքիաթներ էր պատմում: Հատկապես սիրում էինք «Աբազա թակավոյն ու իրեկ էշկիյընին» հեքիաթը, որը ուրիշ ոչ մեկից չեմ լսել: Այդ օրերից գրեթե 75 տարի է անցել, բայց հեքիաթը լավ հիշում եմ:

ԱՐՍԵՆ ՅԱԼԱՆՈՒՋՅԱՆ

Ծնվել է 1917թ. Աբխազիայի Գուլրիփշի շրջանի Ազանտա - Աբլուխվարա գյուղում, այժմ բնակվում է Երևանում

ԱԲԱԶԱ ԹԱԿԱՎՈՅՆ ՈՒ ԻՐԵԿ ԷՇԿԻՅԸՆԻՆ

Լավ աբռուստ ուներ միլլատը աբազա թակավորին օրոկ, ամա վուստի փես էլոն իրեկ էշկիյա, ուվեկ խաբայ չունիր: Ամ էշկիյընին ալ, թարսի բես, կիդիս տա հարուստնուն դուշմոն էյնը. ընեծմընը կողնայնը գու մալ-մելալն ու ֆուխարընուն յառդում գընեյնը: Հարուստնին գեշտոն թակավորին մոդն ու գասին.

- Սաղ ըլլի թակավորը, հընճուկ յե՞պ միր օննըծածը բիդի ասմուն դարմադաղոն ըլլի, ասու չարընն կըդըվի բիդի, պոմմը արա:

Թակավորը համան ուր մաշտկածը ղըրգա գու էշկիյընուն պըռնուշ, ամա ինճիգ տուս չի կալ: Ամ սըրըդիկն ալ, թարսի բես, թակավորին օնգոջը կըյնի դաջգի փադիշահին աստած խոսկը. «Ամ ի՞նճ թակավոր ա աբազին թակավորը, հընոր իրեկ էշկիյա յալ չիգարի պըռնիլ...»:

Աբազին թակավորին հեռսը շադ փիս կելլա, ուր մաշտկածը հըրաման գուդա, խողուն դագընն ալ ըլլի, կըդնուշ-պերուշ ադ էշկիյընուն: Խոսկ գուդա յոր, էշկիյընին թասլում ըլլին նա, ուվեկ ընեծ թալաղին չի տիբնուլ, ուրինծ ուզած դեղը գայնոն դուն շինիլ, աբռիլ, ինծծո յոր միգալ միլլատը:

Քոնիմը օր գոսնի, թակավորը միտկը գընա յոր, ասմուն նըստելընն չի ըլլիլ: «Գեծի մեմը օսնիմ շահարը, միլլատը խառըվիմ, ածկովըս աշիմ՝ ի՞նճ գա-չիկա»,- գասա թակավոյն ու հալվընին փոխած՝ կըյնի ջոմպա: Չովուն ղըյիկը ուդուշ-խըմուշի թըմիզ դեղոն գայնը, ադ թարաֆ գեշտա, մըդնու գու նես: Նեսն ալ լիկը մաշտ. նես մըդնողը, տուս էլլողը իրար խառըված ա: Թակավորը համան թարիֆ գընա յոր, կյի սեղնիմը մոդ իրեկ հոկի նըստած ղըյիկը գաշին, ուսուլիմը լաֆ գընին: «Գըլլիյոր, ասեր ին ադ էշկիյընին»,- միտկը գընա թակավորը հընու մոդգընա գու ադեծ: Աստիյըն-ընտիյըն լաֆ-մաֆ գընին, հասկընընա գու յոր, ադեր սայի ուր միտկ ըղած մաշտիկն ին:

- Ինձի յալ առեկ ծիր փառտիյըն,- գասա թակավորը:

- Տուն ի՞նճ գայնաս ընիլ,- հայծընա գու էշկիյընուն մեծը:

- Թակավորը ծեզի գախ ընուշ ղըրգա նա, գայնոմ խալըսիլ,- կոյա շակայով գասա հալվընին փոխած թակավորը:

Ալայ խընդոն գու:

- Ջատը հիմի թակավորին մոդը էշտող ընկ,- գասին էշկիյընին:

- Մենկ ալի տեսըվինկ գու,- գասա թակավորը հնու աջալըմը գեշտա:

Ուր բալադը հասնի գու, համան հալվընին փոխա գու հնու բեդ գընա էշկիյընուն:

Էշկիյընին կուկոն, կլեխ գուդոն թակավորին (հալբատ, ջոնճիլ չին): Թակավորը գասա.

- Իմ աստածնս աստած ա. ուվեկ ծիյ թալաղին տիբնուլ չի, վոյդեխ կուզեկ, հուն դուն շինեծեկ, աբռեծեկ ծիր ուզաձին բես: Ամա,- գասա թակավորը,- մերաղ մը ունիմ. դաջգի փադիշահը վրաս իֆտիրա նեդեծ տա, ինճ թակավոր իմ օր, իրեկ կեղ ալ չիմ գարի պըռնել դալ: Հիմի, տունկ օր հոգ էկ, ընու խախածընն էգվի բիդի:

Էշկիյընին իրայ սեյրը գընին:

- Սաղ ըլլի թակավորը, ադ մեզի թոխ,- գասա մեծվերը: -Հրաման դուր՝ հազրին տոխ մեգ մեծ, քասում սընդուգ մը, աբռըշումա, զոնգագներով զընգզընգող քուրկ մը հընու կայեղ մը, հնոր ջոմպա ընինկ:

Էդի օրը էշկիյընին լողոն գու Դաջգաստան: Փադիշահին բալադին ղըյիկը տառնոն գու, չեյս տին սեյրը գընին, իրիգվընծու թարաֆ խաբար ղըրգին գու տա՝ մեծ փադիշահ, ալլահին մոդընն մաշտ էգած ա : Բեկծիկը խաբարը դոնին գու: «Պերե՛կ»,- հրաման գուդա փադիշահը: Էրգու էշկիյընին, սընդուգը շալգած, մըդնում գու նես հընու ըռոնծ ծըն հոնուշի՝ պած գընին: Սընդուգին մեծընն կելլա մեգ զոռլի պոմմը՝ էշկիյընուն մեծը՝ աբռըշումա զընգզընգող քուրկին մեծը փատտըված, հընու գասա.

- Փադիշա՛հ, քու աբռուշի օրեյդ բաշ ըղոն, ամա երգընկին ու աշխըրին դերը՝ ալլահը, քեզի գյանկ պաշխա գու, ուր մոդը կոռա գու, մեզի յալ ղըրգած ունի յոր, դոնինկ:

Վախուշընն փադիշահին սիդը բադռի գու, էրեսին կունը ջերմըգնա գու, զորով գասա.

- Ինծծո՞ դոնող էկ:

Էշկիյընուն մեծը հակուծընն հոնա գու քուրկը, հակծընա գու փադիշահին հնու բարգեծընա գու օսկու բես բըլբլող սընդուգին մեծը: Ամտի առաճ փադիշահը բեկծիկնուն հրաման դված ունիր՝ ջոմպընին պոնուշ: Սընդուգը շալգած՝ էշկիյընին հասնին գու ծովապ, նըստին գու կայեղ հնու շիդագ լողոն գու աբխազնուն երգիր:

Ընդեխ խաբարը ուժե հասած էր, ալլայ միլլատը ժողվըված բեդ գընեյնը: Եպոր սընդուգը շալգած էշկիյընին գերևնոն, մեծ-բիջիգ, քեֆ ըլլուշընն ջղալըն-կոռալընն, ուրինկը շալագնին գառնուն սընդուգն ու հասնին գու բալադ: Աբազին թակավոյն ալ, ուր նազիր-վեզիյնուն հեդը ազբըրին փըռված յաստուղնուն յոն ընգած, բեդ գըներ: Էշկիյընին սընդուգը պած գընին, փադիշահին քուրկով-մուրկով հոնին գու փես: Միլլատը ծիձաղընն թալնա գու: Ջավալի փադիշահը ղըյիկը սեյրը գընա... աբազին թակավորին դեսնուշին բես՝ ընընն ինճ հասկընընա գու...

- Հը՛, փադիշա՛հ,- գասա թակավորը,- հիմի ի՞նճ գասիս, ղոլա՞յ էյ տա աս էշկիյընուն պըռնուշը:

Փադիշահին լիզուն պըռըվի գու, ծընն հոնիլ չիգարի: Թակավորը միլլատին հոմար մեծ սեղոն պոնալ գուդա, նահրին գու ուդուշ-խմուշ, երկուշ ու բար խաղուշ: Սադա փադիշահը, նըստած, ինճիգ պերոնը տընիլ չի, թակավորին գասա յոր, ուրինը եդ՝ ուր երգիրը ղըրգա : Ատպես ալ գընին:

Մեմալ՝ ուդուշ-խմուշի սըրընն, թակավորին բեկծիկը մոդգընոն գու էշկիյընուն, ծեռվին գուլըրին հնու գասին օր, թակավորին հըրամանով ընեծ գախաղան հոնին բիդի: Միլլատը խառըվի գու իրար, ջըղուշ-կոռուշ, էշկիյընուն սիդը բադռի գու: Մեմընալ թակավորը ծեռկը վիր գընա, ալայ ծընները գընդռին գու: Թակավորը տառնա գու էշկիյընուն.

- Տունկ հիշե՞կ գու տա ըն մաշտուն, վերը ուզեծ ծիր փառտիյընն մըդնուշ, տունկ ալ աստիկ՝ ի՞նճ գայնաս ընիլ: Ըն ալ աստավ՝ թակավորը ծեզի գախ ընուշ դոնա նա, խալըսիմ գու: Ամ մաշտը ես էյ:

Թակավորը հըրաման գուդա բեկծիկնուն՝ ազատ թողուշ էշկիյընուն: Ալլայ միլլատը խընդա գու, քեֆ-ուրախուտինը շարունագին գու: Հեկյատն ալ բաշ գըլլի:

աբռուստ - ապրուստ, կայք
միլլատը - ժողովուրդը
փես էլոն - հայտնվեցին
էշկիյա - ավազակ
ընեծմընն - նրանցից
մալ-մելալ - ունեցվածք
ֆուխարընուն - աղքատներին
բալադ - պալատ
յառդում գընեյնը - օգնում էին
դարմադաղոն ըլլի - ոչնչանա
չարընն - ճարը
ադ սըրըդիկն ալ - այդ ժամանակներում էլ
գեծի - սպասիր
շահար - քաղաք
թըմիզ - լավ
թարիֆ գընա - նկատում է
ուսուլիմը - կամաց
լաֆ գընին - զրուցում են
սայի - իսկապես
գըլլիյոր - գուցե
փառտիյընն - խումբը
գախ ընուշ ղըրգա նա - կախելու որ ուղարկի
աջալըմը - շտապով
բեդ գընա - սպասում է
թալաղին - անձին
մերաղ - մուրազ, ցանկություն
իֆտիրա նեդեծ - զգրախոսեց
կեղ - այստեղ՝ գող
խախածընն էգվի բիդի - հախից պետք է գալ
կայեղ - նավակ
իրիգվընծու թարաֆ - երեկոյան կողմ
բեկծիկը - պահակները
բարգեծընա գու - պառկեցնում է
ազբարին - բակում
յաստուղնուն - բարձերին
յոն ընգած - թիկն տված
թալնա գու - ուշաթափվում է
զավալի - խեղճ
գուլըրին - ոլորում են
ծընները գընդռին գու - ձայները կտրում են
բաշ գըլլի - ավարտվում է
կըյի սեղնիմը մոդ - կողքի մի սեղանի մոտ
կոյա շակայով - իբր կատակով
հոնին գու փես - հանում են մեջտեղ
իսկիտ - տխուր
տառնա գու - դիմում է

«Համշեն» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպության խորհուրդը խորապես վշտացած է փոխնախագահ Սահակ Լեւոնյանի սիրելի մոր՝ տիկին ՖԵՐՈՒՋ ՍՂՈՅՅԱՆԻ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին եւ մերձավորներին:

«Համշեն» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպության խորհուրդը խորապես վշտացած է խորհրդի անդամ Կարլ Յալանուզյանի սիրելի տիկնոջ՝ ԱՆԱՀԻՏ ՅԱԼԱՆՈՒՋՅԱՆԻ անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է Յալանուզյանների ընտանիքին, հարազատներին եւ մերձավորներին:

Գլխավոր խմբագիր
և համարի պատասխանատու՝
ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՉԱՅՆ ՀԱՄՇԵՆԱԿԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան, Ա. Իսահակյան 18: Հեռախոս՝ (+374 1) 25 21 26:
Գրանցման վկայական՝ N 03Ա054979, տրված՝ 26.06.2002թ.:
Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին:
Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Ձայն համշենականին» պարտադիր է:

"ДЗАЙН АМШЕНАКАН" (ГОЛОС АМШЕНСКИЙ)
Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации "АМШЕН" (г. Ереван)
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН
Газета распространяется бесплатно.
"HAMSHEN" Compatriotic-charitable public organization (Yerevan).
"DZAYN HAMSHENAKAN". Editor in chief SERGEY VARDANYAN
E-mail: dzaynhamshenakan@yahoo.com

Ծավալը՝ 8 էջ, տպաքանակը՝ 1000 օրինակ, ստորագրված է տպագրության 26.02.2005 թ.: Անվճար